

---

---

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԸ ՄԻԶԱԳԵՏՔ ԱՔՍՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ\*

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ՀՈԳԵՎԱՐՔԸ  
(Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)

*Սուրուճի օվա\* (հայերու գերեզմաննոց). Ճարապլուսի պագարը. Նիզիպի խանի պատկերը:*

Սուրուճի օվա ընդարձակ, անջուր, տափակ, քարքարուտ և բուսականութենէ գուրկ վայր մըն է, ուր Հայաստանի ամեն կողմերէ հաւաքուած էին 60,000 հայեր: Ասոնք յանձնուած էին խումբ մը ժանտարմաներու, որոնք կը գտնուէին հարիւրապետի մը հսկողութեան ներքն: Տեղը քաղաքներէ հեռու ըլլալով, այս մեծ բազմութիւնը, կանանց և երեխայոց, զրկուած էր ոնէ օգնութենէ ու մահը տարածուած էր իրենց մէջ: Ժանտարմաներու թոյլտուութեան շնորհիւ շրջակայ քիւրդերը և թիւրքերը միշտ կու գային կողոպտելու, մանուկ, աղջիկ գողնալու կամ գնելու. թշուառութիւնը և անօթութիւնը այնքան սաստիկ էր, որ խեղճերը կորսնցուցած էին բարոյական ոնէ զգացում և իրարու մանուկ կը գողնային ու կը ծախէին: Շատ կիներ կը դիմէին քիւրդերու, որպէսզի զիրենք առնեն նոյնիսկ իբրև ծառայ:

Ժանտարմա Մահմուտ օնպաշին, որ ինձ ծանօթ էր, կը պատմէր, թէ ինքը Սուրուճի օվայի մէջ միայն աղջիկ և մանուկ ծախելով 100 ոսկի վաստկած էր. հակառակ իր յառաջացած տարիքին և արդէն երկու կին ունենալուն՝ կնութեան առած էր նաև մէկ գեղեցիկ հայ աղջիկ: Շրջակայքի ամեն կողմէն խումբ-խումբ թիւրք զինուորներ և ժանտարմաներ, իրենց գործը լքելով, կը փախէին, կու գային Սուրուճի օվա հայ կիներ ու երեխաներ իբր ւաւար տանելու համար: Չիֆտէք կայարանի ժանտարմայի տասնապետը կը հեռագրէ Ճարապլուսի հարիւրապետին.

«Զինուորները և գծի գիշերապահ ժանտարմաները Սուրուճի փախան ամուսնանալու. ուրիշներ դրկեցէք» :

Թիւրքերու, քիւրդերու և ամեն կողմերէ իսլամներու դէպի Սուրուճ երթալը և միւս կողմանէ հոն եղած համաճարակը և մահը սկսան անհանգիստ ընել կառավարութիւնը, որ այդ բոլորին առաջքը առնելու համար ողջ մնացած 10,000 հոգին բաժնեց շրջակայ քիւրդ գիւղերու մէջ: Բայց քիւրդերը մերժելով ձրի հաց կերցնել, հարկադրեցին խեղճերը, որ կամ իրենց հետ ամուսնանան, կամ իրենց ծառայեն:

1000 հոգի այս եղանակաւ կորսուեցան, իսկ մնացեալ քանի մը հազարը դրկուեցան դէպի Արար-Փունար և Միջագետքի զանազան կողմերը:

Մահմուտ օնպաշին ներկայ եղած էր այնտեղ, երբ հրաման արձակուեցաւ ողջ մնացած ժողովուրդը բաժնել քիւրդ գիւղերու մէջ: Անիկա կը գտնուէր այն ժանտարմաններուն մէջ, որ պաշտօն ունէին հսկելու այդ 50 – 60,000 հաւաքուած հայերու վրայ:

Ընդարձակ, անծայր տարածութեան վրայ գետնին կպած, անձայն, անշարժ ժողովուրդը կը մնար: Ժանտարմաները կը հրամայէն, որ ամենքը ոտքի ելլեն և անմիջապէս իրենց հետևին. անշարժ բազմութեան մէջ խումբեր կերերան և ժանտարմաները զարմանքով կը տեսնան, որ հազիւ թէ 10,000 հոգի կանգնած էին և որոնք իրենց ստիպողական հրամաններուն վրայ կը սկսին յառաջանալ, կոխկրտելով անթիւ դիակներ: Մեռելները տարածուած և տեղ տեղ դիզուած էին դաշտին ամեն կողմերը և սակաւաթիւ ողջերը, որ կապրէին ու կը պառկէին մեռելներու մէջ կմախային կերպով վտիտ, մոլորուն և դողդոջուն ուրուականներու պէս կը շարժէին կորսնցուցած կենդանի մարդու ամեն երևոյթ և զգացում: Անոնք ուժ չունէին խօսելու, քայլելու, ոնէ բան արտայայտելու և տարերային ուժէ մը մղուած՝ կոխտտելով իրենց սիրելիներու դիակները կանցնէին կերթային առանց անգամ մը ետև դառնալու:

Մօտ 50,000 դիակներ անթաղ մնացին և բացօթեայ փտտեցան. ամբողջ Սուրուճի օվան դարձաւ հայերու գերեզմանոց:

Եւ տակաւին Միջագետքի կիզիչ արևը չէր մաքրած այդ համայնատարած և բացօթեայ գերեզմանին ոսկորոտիքը իրենց նեխութիւններէն, երբ կիսամեռ հայերու նոր ստուար խումբեր հետզհետէ կու գային, նոյն վիճակին կենթարկուէին և յանկարծական հրամաններու անսալով, օրհասական վիճակի մէջ սակաւաթիւ կը մեկնէին, ճամբուն վրայ հետզհետէ նօսրանալով և այսպէս վերջապէս հետզհետէ չքանալով:

Այդ ժամանակները Ճարապլուս կը ներկայացնէր անսովոր պատկեր մը: Հիւսիսային հայաբնակ վայրերու ճոխ կողոպուտը գրգռած էր ախորժակը հարաւայի գաւառներու իսլամ բնակչութեան. տեղացիք կը տրտնջային, որ Կիլիկիոյ մէջ կառավարութիւնը աւելի մեղմ եղած է հայ բնակչութեան նկատմամբ և չէին կարողացած անարգել և սանձարձակ կողոպտել ու կոտորել: Թէն ամեն օր տեղահան եղած ժողովուրդի խումբեր կու գային և կանցնէին, բայց ասոնք քանիցս յարձակումներու ենթարկուած ըլլալով, սոված և լոլիկ՝ էին: Ամեն տեղ իսլամ ժողովուրդը, ըլլայ քաղաքացի թէ գիւղացի, երեսի վրայ թողած խաղաղ աշխատանքը՝ կանցնէին Եփրա-

տր և կերթային որոնելու հայ ժողովուրդի բեկորները: Օրուան ընթացիկ հարցումն էր. «Չե՞ս երթար հայ կողոպտելու»:

Ճարապլուսը մեծցած և շենցած էր: Բացուած էր նոր պագար մը, ուր օրը օրին կը ծախէին տեսակ-տեսակ ապրանքներ: Գիւղացիներ, պաշտօնեաներ, գործաւորներ, քաղաքացիներ հեռուներէն շարան - շարան կու գային և ընչաքաղցութիւնով ոգնորուած կը հարցնէին, թէ ո՞ր է պագարը: Ամեն օր պագարը կը լեցուէր ու կը պարպուէր, և վաճառող թէ գնող չափազանց գոհ կը մնային. մին քսակը ոսկի լեցուցած տուն կը վերադառնար, միւսն ալ թեթն գիներով իւրացուցած կըլլար ծանրարժէք առարկաներ և գոհարեղէններ: Բայց պագարի ապրանքները չէին սպաներ. օրը օրին կու գային նոր տեսակներ, նոր ձևեր. ամեն հայաբնակ գաւառներու ճարտարարուեստը, ոսկերչութիւնը, գորգեր, զարդեղէն, պղնձեղէն, մետաքսեղէն և այլն հարուստ և նրբաւարտ՝ կը ցուցադրուէին այնտեղ խառն ի խուռն, և Ճարապլուս տեսակ մը արուեստահանդէս մըն էր կարծես:

Գնողները խումբերով կը մեկնէին և երբեմն ալ կու գային ինձ ցոյց տալու և կը հարցնէին՝ «այսքան վճարեցի, կարժե՞ մի»: Փողոցները լիքն էին զանազան երևոյթով մարդոցով, որոնք իրենց նոր հագուստներուն մէջ տօնական ձև ունէին: Ահա քիւրդ մը րէտենկոթ հագած, որ քանդակած շրջանակով հայելիի մէջ կը նայի և քիւլահը կը շտկէ. բոկոտն ստահակ մը թաւիշէ վերարկու մը հագած՝ պարծենալով կանցնի. աղբահաւաք մը մետաքսեայ լաթերով՝ էջերը կը քշէ: Ահա պաշտօնեաներ գնած են մատանիներ, ադամանդներ, ոսկի ժամացոյցներ և շատ մը զարդեղէններ, որոնց վրայ երբեմն կերևին հայերէն գիրեր: Հրեայ առևտրականներ էջերով և ուղտերով բարձած կը տանին պղնձեղէններ, կահ-կարասի, տան զարդեր և հակ կապած ապրանքներ:

Շրջակայ գիւղերը ողողուած են եւրոպական ապրանքներով՝ արդիւնք հայ տուններու և վաճառատուններու աւարին. ամեն ոք կը կրէ նոր հագուստ, նոր կօշիկ, նոր ձևերով. միայն քիւլահները անփոփոխ մնացած են. կիսավայրենի և չտես տեղացի ժողովուրդը ողողուած է այն ճոխ հարստութիւնով, որ հայերը տարիներու ընթացքին համբերութեամբ և աշխատութեամբ դիզած էին, իւրացնելով եւրոպական և արևելեան ճարտարարուեստը և արտադրութիւնները:

Գիւղապետը գիս կանչեց իր տունը հասկնալու համար գնած իրերուն արժէքը: Յոյց տուաւ գորգեր, շալեր, եկեղեցիի մետաքսեայ վարագոյրներ, ոսկեթել բանուածքով շուրջառներ, որոնց վրայէն խաչերը քանդուած էին, եկեղեցական անօթներ ու շատ մը թանկագին առարկաներ: Անիկա զարմացած կը հարցնէր, մետաքսեայ բանուածք մը ցոյց տալով. «Որո՞ն հարսն է այս գեղեցիկ աղջիկը»: Ճմրթկուած ձեռագործ մըն էր անիկա, չորցած արեան բիծերով արատաւորուած, որ կը ներկայացնէր Մայր Հայաստանը շղթաներով:

Հալէպի հիւսիսային կողմը կը գտնուէր Նիզիպի խանը. իսլամ արաբ ճամբորդները ցաւելով կը պատմէին, թէ ինչէ՛ր կը կատարուին Նիզիպի խանի պատերուն մէջ: Անոնք իրենց աչքերով բան չէին տեսած, բայց լսած էին հատակոտոր պատմութիւններ և ամեն օր լսած էին մանաւանդ աղեկտուր հեծեծանքը բանտարկեալներուն և առած էին դիակներու հոտը, որ կը հասներ մինչև հեռուները: Նիզիպի խանի տասնապետը շրջակայքը գտնուող հարուստներու իբրև նուէր կը դրկէր հայ աղջիկներ, այնպէս որ ամեն կողմ տարածուած էր հայ աղջիկներու համբար. կը գովէին անոնց բարեկրթութիւնը, ուսմունքը և ձեռական նուրբ աշխատութեանց մէջ ունեցած ճարտարութիւնը: Այնպէս որ հրապուրուած՝ ամեն կողմերէ իսլամներ կերթային և կը գնէին կիներ, աղջիկներ ու մանուկներ 5 կամ 10 դրուշի փոխարէն:

Այս կացութիւնը այնքան հանրածանօթ էր, որ երկաթուղիի նորոգութեան հսկիչ պաշտոնէայ՝ օսմանեան հպատակ ֆրանսացի մը աղջիկ գնելու պատրուակաւ կը մտնէ Նիզիպի խանը և կը տեսնէ զարհուրելի պատկերը:

Ֆրանսացին կը մտնէ քարաւանսարայ, կը դիմէ ժանտարմաներու տասնապետին և արտօնութիւն կը խնդրէ կին մը կամ աղջիկ մը գնելու: Տասնապետը սիրալիք ընդունելութիւն կընէ իրեն և երկարօրէն կը գովաբանէ հայ կիներուն արժանիքները. ցոյց կուտայ իր խոհարարուհին և այն խեղճ հայուհիները, որ իրեն սեփականացուցած էր և որոնք իրենց ասեղնագործութիւններով զարդարեր էին իր սենեակը: Ֆրանսացին փափաք կը յայտնէ անձամբ ընելու իր ընտրութիւնը, որուն վրայ տասնապետը կառաջարկէ իրեն՝ այցելել խանին բակը:

Այդ բակը մեծ էր և սենեակներ չունէր, միայն չորս պատերով շրջափակուած մերկ տարածութիւն մըն էր: Աջ կողմը և ճակատը խոնուած էին զգզուած, սարսափահար, ցնցոտիներով ծածկուած կիներ, իսկ ձախ կողմը դիզուած էին խումբ մը դիակներ, որոնցմէ արտաշնչուող նեխութիւնը անշնչելի և նողկալի կը դարձնէր օդը. զլխու պտոյտի մէջ, գրեթէ գինով վիճակի հասած, պաշտօնեան կը տեսնէ, որ նոր դիակներու վրայ ինկած էին կիներ, որոնք իրենց լացով և ողբով կը իլացնէին օրհասականներուն հառաչանքը: Ոմանք կը մերկացնէին դիակները հագուստները առնելու համար և ոմանք խելագարի շարժումներով աննպատակ կը դեզերէին, միօրինակ վանկ մը կամ խօսք մը կրկնելով անվերջ: Որք մնացած մանուկները հաւաքուած էին իրարու մօտ և ոչ ոք կը զբաղէր իրենցմով: Զառանցական վիճակ մը կը տիրէր ամենուն վրայ, և անոնք ոչ միայն զիրար մոռցած էին, այլ կարծես ինքզինքնուն գիտակցութիւնը կորսնցուցած էին: Անտէր մնացած մանուկները անհաւատալի նիհարութեան մը հասած էին, և այդ փոքրիկ կմախքները սարսափելի էին իրենց տենդային սուր նայուածքներով. անպայման շուտով կը մեռնէին: Պատի ճեղքերէն խելայեղած կիներ իրենց հոգեվարքը երկարաձգելու համար քիւրդերուն

կը ծախէին իրենց մանուկները, հագուստները և նոյն իսկ 12, 13, 14 տարեկան աղջիկները, ու այդ բոլորը յաճախ պատատ մը հացի փոխարէն, որ իբր խայծ հեռունէն կը ցուցնէին քիւրդերը սովալլուկ կիներու: Դժոխային խառնաշփոթութիւն մը, գարշահոտութիւն, լաց, հեծեծանք, կոկորդային, գրեթէ անասնական աղաղակներ, խելագարի ճիչեր և երբեմն քստմնելի քրքիջներ կը լեցնէին այդ շրջափակը, որոնց արձագանքը կը հասնէր մինչև հեռունները:

Երբ այդ թշուառները կը տեսնեն եւրոպական հագուստներով մարդ մը, և իմանալով թէ կին մը գնելու եկեր էր, ամեն կողմերէ կը թափուին շուրջը, իրարու կը զարնեն, իրարու կը հայհոյեն և կուզեն առաջ անցնիլ և երևալ օտարականին: Շատերը թշուառութենէ ծամածռած դէմքերու վրայ մոռցուած ժպիտ մը փորձելով, կը գովէին իրենց գեղեցկութիւնը, իրենց արժանիքները. «Ինձ առ, ես գեղեցիկ եմ, ես այս ինչին աղջիկն եմ»: Ոմանք կը հաստատէին, ոմանք կը հերքէին. «Սուտ է, սուտ է, ես աւելի գեղեցիկ էի, հարսն էի գիւղապետին», «ես գիտեմ մանել, գորգ հիւսել, կը ծառայեմ քեզի գիշեր ցորեկ, տանդ շունը կըլլամ, գերիդ կըլլամ, տար ինձ»: Խլացուցիչ աղմուկը այս առաջարկութիւններուն, որով ամեն մէկը կը գովէր իր գեղեցկութիւնը, իր անցեալ հարստութիւնը, իր ընտանիքին ազնւութիւնը և ընդունակութիւնները, սեղմ շարքերը՝ կեղտով, աղբով ծածկուած արքայալներուն, որոնք հետզհետէ իրենց ճնշումին տակ պիտի խեղդէին պաշտօնեան, նեղացուց ժանտարմը, որ ձեռքի խարազանով անողոք հարուածներ իջեցնելով այդ ցաւատանց կիներուն վրայ, ամենքը իր տեղը քէց և ընկերանալով հիւրին, սկսաւ մէկ – մէկ աղջիկներ կանչել և գովել անոնց գիրութիւնը, գեղեցկութիւնը, առողջութիւնը: Երբեմն կը հարցնէր. «Որո՞ւ աղջիկն ես», և երբ պատասխանը կը լսէր, կը հաստատէր. «Ես կը ճանչնամ իր հայրը, այս ինչ քաղաքի նշանաւոր վաճառականներէն մէկն էր, հարուստ, քիպար մարդ էր», և այսպէս յաջորդաբար:

Ֆրանսացին ամբողջ քարավանսարային շրջանը կընէ այս եղանակաւ. անկիւն մը քարի մը վրայ կը նշմարէ յանկարծ երկու կիներ, որոնք շատ կը նմանէին իրարու և քոյրեր ըլլալու էին. սև աչքերով, սև մազերով, երկարահասակ, վայելուչ ձևերով՝ անոնք նստած էին և տխրութեամբ կը նայէին: Իրենց հագուստները թէն աղտոտած և պատառոտած, բայց կերակր, որ անոնք նախապէս մեծագին շրջագրեստներ եղած էին, ծանրաբարոյ և մտածկոտ՝ անոնք տեղերնէն չէին շարժած: Երբ մօտեցանք իրենց, ժանտարմը բացառիկ գովեստներով խօսեցաւ անոնց նկատմամբ և սկսաւ հարցումներ ուղղել. «Որո՞ւ աղջիկներն էք, ո՞ր տեղացի էք»: Անոնք չէին պատասխաներ հարցումներուն և արցունքոտ աչքերով յուսահատօրէն կը դիտէին ֆրանսացին, որ վերին աստիճանի զգածուած էր. այդ դժոխքը և այդ ազնուական կիներուն ներկայութիւնը այդ զարհուրելի միջավայրին մէջ զինքը կը շուարեցնէին: Երբ կիները տեսան, որ պաշտօնեան փափաք կը յայտնէ զիրենք տանելու, լռութիւնը խզեցին և անձկալի ձայնով մը հարցուցին. «Իրօք մեզ կը տանի՞ս»:

Տրանսացին հարկադրուեցաւ «այո՛» ըսել: Ժանտարման այդ միջոցին դիրքը կը փոխէ և կըսկսի բռնանալ երկու հայուհիներուն վրայ, որպէսզի հեռանան պաշտօնեայէն:

– Ես գնեցի այս երկու կիները, կըսէ պաշտօնեան և անոնց գինը տալով, կը հեռացնէ ժանտարմը:

Երբ ժանտարման կը հեռանայ, կիները լուռ և երկարօրէն կը նային օտարականին և իրենցմէ կըտեսերը կը հարցնէ:

– Պա՛րոն, դուք ֆրանսերէն կամ անգլիերէն գիտէ՞ք:

Ու կըսկսին իրեն հետ խօսիլ շատ մաքուր ֆրանսերէնով:

Երբ այս կիները կիմանան, որ իրենց խօսակիցը քրիստոնէայ է, ծնկաչոք կը պաղատին իրեն, որ զիրենք կերպով մը հեռացնէ այդ դժոխքէն: Մին ձեռքերը կը համբուրէր, միւսը կը փարէր ոտքերուն և իրենց յորդահոս արցունքները կը թափէին ու կաղաչէին:

Մահացու յուզումի մը ենթարկուած պաշտօնեան կը մտածէր. «Ո՛ւր տանիմ, ինչպէս ընեմ», որովհետև ինքը հաստատ բնակարան չունէր, լերան գլուխը քիւրդերու մէջ վրաններու ներքև մնալու հարկադրուած էր և զիտէր, թէ նոր փորձանքներու կենթարկուէին խեղճերը, եթէ այնտեղ տանէր իր հետ: Կուզէ առանձին հեռանալ, բայց կիները կը հետևին իրեն և ժանտարման արգելք չըլլար, որովհետև գինը ստացած էր: Մինչև լեռները երկու կիները կը հետևին պաշտօնեային, ուր հասնելէ ետքը ստիպուած զիրենք կը տանի մօտակայ քիւրդ գիւղ մը, կը յանձնէ զանոնք ձերունի գիւղապետին և անոնց քանի մը ամսուան ապրուստի ծախքերը կը վճարէ, որպէսզի հանգիստ ու ապահով մնան քիւրդ գիւղապետին մօտ:

Այս կիները Կեսարիոյ շրջակայքէն էին:

Ժողովուրդին փոխադրութիւնը գնացքներով. Ձո՛ւր...  
 ջո՛ւր... Երզնկացի կին մը եւ Երզնկայի տեղահանութիւնը.  
 Չըմըշկաձագի պատմութիւնը:

1915 ապրիլ ամսէն մինչև նոյեմբեր Ռասուլէյնէն, Թէլէպհադէն և Արար-Փունարէն գնացքները կը հասնէին Ճարապլուս լիքը տեղահան եղած ժողովուրդով. անոնք, որ դրամ ունեցէր են, կըրցէր են մարդատար գնացքներ մտնել: Կիներու, աղջիկներու և մանուկներու խառն ի խուռն բազմութիւններ էին ասոնք, ամենքն ալ յուսահատած, կոպերնին արիւնոտ, դէմքերնին արցունքով ողորդուած:

Ինձ ծանօթ յոյն մը, որ հայեր փոխադրող կառախումբով Հալէպ կերթար, սև թաւիշ հագուստ հագին աղջիկ մը ցոյց տուաւ և ըսաւ.

– Եղբայր, այսպիսի սիրուն, մաքուր աղջիկ մը, որ լաւ ֆրանսերէն կը խօսի, քիւրդերու ձեռքը մնացեր էր. հազիւ կրցայ զինքը ազատել իմ զինուորական բարեկամիս օգնութեամբ, ըսելով, թէ կնութեան պիտի առնեմ:

Աղջիկան մայրը, հայերէն խօսելու լսելով, զիս կանչեց. մօտերնին գացի և իմացայ, որ ամասիացի են. յորդառատ արցունք թափելով և ա՛խ ու վախերով պատմեցին, թէ իրենք հարուստ և հին ընտանիքի մը անդամներն են: Մայրը հարցուց ինձ, յոյն երիտասարդը ցոյց տալով, թէ արդեօք իրա՞ւ քրիստոնէայ է:

– Խոստացիր իմ աղջիկս իրեն կնութեան տալ, ըսաւ, որովհետև մեզ ազատեց զազաններու ձեռքէն:

Նոյն վակոնին մէջ կային 10 հայ կիներ, բայց միևնոյն քաղաքէն երկու հոգի չի գտայ: Այնպէս բաժան բաժան ըրած էին տեղահանուած ժողովուրդը, որ այդ 10 հոգիին մէջ կային պափրոնցի, կերասոնցի, սամսաղցի, երզնկացի, սեբաստացի և այլն կիներ՝ մէկ մէկ հոգի:

Ամենքը ծանրաբեռնուած էին վիշտով, կարօտով, դառնութիւնով: Կը պատմէին նաև, թէ ինչ տաժանելի դժուարութիւններու հանդիպէր էին կայարաններու մէջ, ուր քրիստոնէայ պաշտօնեաներ իսկ անխնայ կերպով շահագործեր էին իրենց սոցիալականներ, սարսափը, խուճապը: Տոմսակ չէին ծախէր, մինչև որ չըստանային զինք 2, 3 և երբեմն աւելի անգամ: Հարիւրաւոր թիւրք զինուորներ կը խոնուէին հայ գաղթականներու վակոններու շուրջ և 5 փարայի հացը կը ծախէին 2 – 3 դրուշի: Շատ անգամ տեսնելով կնոջ կամ աղջիկան դողդոջուն ձեռք մը, որ կերկննար իրենց հացը գնելու համար, կըսէին իրարու. «Ա՛խ, եթէ մեզի հրաման մը տրուէր, ամեն մէկերնիս կառնէինք ասոնցմէ մէկ մէկ կին»:

Այդ գնացքներուն մէջ հանդիպեցայ իմ ազգականներէս տիգրանակերտցի Զերտերեան ընտանիքին, որ հարուստ առևտրականներ էին, և չմշկածագցի երկրագործական պանքայի տնօրէն պ. Սուգեսսեանի կնոջ ու աղջիկներուն, որ յետին չքաւորութեան մատնուած ըլլալով, մուրացկանութեան ենթարկուած էին և կը խնդրէին կտոր մը հաց և մի քանի դրուշ, որպէսզի ճամբան ծախսեն: Դժուար էր զիրենք ճանչնալ մէկ ակնարկով. անոնք կորսնցուցած էին իրենց գեղեցկութիւնը և շնորհը, վախէն դեղնած, կապուտցած, արնէն սևցած, այլանդակ և ողորմելի երևոյթներ ստացած էին:

Իւրաքանչիւր կայարանի մէջ հայ արքայալները կենթարկուէին ամեն տեսակ չարչարանքի և նախատինքի: Կայարանի պաշտպանութեան յատկացուած զինուորները իրենց բոլոր լրբութեան մէջ սանձարձակ կըզգային ինքզինքնին: Կայարանի աջ կողմը կը գտնուի միշտ ջրահան մեքենան, իսկ ձախ կողմը վայրի ու ամայի է: Երբ գնացքը կը կենար, արքայալներէն մաս մը պապակած կը վազէին ջուրին գլուխը, իսկ մաս մը կանցնէին ձախ կողմը անհրաժեշտ պատճառներով. զինուորները, որ դարանակալ կըսպասէին փոսերու մէջ, յանկարծ կը յարձակէին

այս խեղճ կիներուն վրայ և կը համարձակէին բռնաբարել զիրենք նոյն իսկ մեծ կայարաններու մէջ: Անդին ջուրին գլուխը ժողովուած աղջիկներու և մանուկներու մէջ նոյնպէս ազատ կը մտնէին թիւրքեր: Յանկարծ ճիշտ մը կը բարձրանար, ուրիշ մը կաղաղակէր և կամ անօգուտ կերպով օգնութիւն կաղերսէր:

Ձանազան կարգի խայտառակութիւններու նշուակ դառնալով, այդ դժբախտ կիները յաճախ կապաստանէին իրենց վակոնները առանց ծարաւնին կարենալ անցնելու: Խոնուած մանուկներու խումբեր այս իրարանցումին և շփոթութեան մէջ ոտքի տակ կերթային, կամ մեծ դժուարութեամբ ձեռք անցուցած ջուրը կը թափէր և պապակած խեղճ շրթները կարօտ կը մնային ջուրի: Երբեմն անոնք այնքան ծայրայեղ կերպով տագնապած էին ծարաւէն, որ կիյնային երեսի վրայ գետին և մեքենայէն թափուած ու ոտքերու տակէն անցած ջուրը կը լափլիզէին:

Այս բոլոր եղելութիւնները ամեն օր աչքի առաջք ունենալով, ես և ուրիշ ընկեր մը որոշեցինք ճար մը ընել: Հաւաքեցինք քանի մը արաբ տղաներ և կարգադրեցինք հաց, մանաւանդ ջուր բաշխել մեր կայարանը հասնող հայ արքայապետներուն:

Անմիջապէս, որ կառախումբը կը կենար, դոյլերով ջուր և հաց առած մեզ հետ կը մօտենայինք վակոններուն: Շատերը վախնալով կայարանի զինուորներէն, վարչէին իջներ և իրենց ամանները կերկարէին, որ լեցնենք: Եթէ ամանը պղնձեայ ըլլար, զինուորները կը յափշտակէին և կը փախէին: Սակայն պղնձէ ամանները բացառութիւն էին. ընդհանրապէս իրենց քով մնացած էին թիթեղէ ժանգոտած անօթներ, չորացած դդումներ, գերմանացիներու թողած քոնսերվի պարապ ամաններ. և անոնք, որ այս բաները ունէին, տակաւին բաղդաւորներն էին. մեծամասնութիւնը գուրկ էր ոնէ միջոցէ ջուր ունենալու համար: Տաքէն ու տապէն այսահարած դէմքեր, չորացած շրթունքներ կարկամած լեզուներով անհասկանալի և խռպոտ աղմուկ մը կը բարձրացնէին և անմիջապէս, որ կարելի ըլլար, հազարաւոր բազուկներ կերկարէին՝ ջո՛ւ ւր... ջո՛ւ ւր... աղաղակելով:

Կառավարութիւնը հաշտ աչքով չէր նայեր մեր օգնութեան, որ ինքնին շատ քիչ բան էր բաղդատմամբ թշուառութեան. այսու ամենայնիւ ուշադրութիւն չէինք ընել սպառնական ակնարկութիւններուն և ամեն անգամուն կը մօտենայինք վակոններուն, ամեն մէկս կրելով երկու մեծ ամաններով ջուր: Արքայապետները ընդհանրապէս խոնուած էին բեռներու վակոններու մէջ, որոնք 4 փոքրիկ լուսամուտ և երկու դռներ ունէին, որոնք փակուած էին դրսէն: Երբ կը մօտենայի և դռներէն մէկը կը բանայի, ներսը խոնուած բազմութիւնը, կարծես դժոխքէ փախիլ ուզելով, կը խուժէր վրաս և ամեն կողմէ անէծք կը թափէր վրաս, որովհետև կը կարծէին, թէ ես եմ դուրը գոցեր: Խեղճերը տեղ չունէին նստելու և որդերու պէս կը գետային. անհամար բերաններ մէկ բան կը պահանջէին՝ ջո՛ւ ւր... ջո՛ւ ւր... Ոմանք արհամարհելով ամեն վտանգ, դուրս կը նետուէին և կերթային դէպի ջրահան մեքենան:



Այդ անհամբեր, պայակած, մոլորուած բազմութեան կանոնաւոր ջուր բաշխելը անհնարին կը դառնար և կէսը պարապը կը թափուէր: Չիրար կը հրէին, իրարու ձեռքէ յափշտակել կուզէին ջուրով լի ամանները, և հայհոյութիւններու, անէծքներու փոթորիկ մը կը բարձրանար, երբ դողդոջուն կամ կարկամած ձեռքերէ ամանը կը շրջէր և ջուրը կը թափէր ցնցոտիները թրջելով: Այն ատեն մանուկները լռին ու ինքնամփոփ կը կառչէին կնոջ հագուստներու և ջուրի գովութիւնը վայելելու համար թրջուած լաթերը կը ծծէին:

Իրարու համար կարեկցութիւն, նոյն իսկ հարազատներու մէջ, անհետացած էր բոլորովին:

Ամեն մէկը գերագրգռուած իր կրած տանջանքներէն՝ թշնամական վերաբերմունք ցոյց կու տար իր արքայի ընկերին. անօթութիւնը և ծարաւը անյագ ու խելագար դարձուցած էին զիրենք. անոնք վայրի գազաններու ձև ունէին և յաճախ պատահած է, որ գաւաթ մը ջուրի համար կիներ իրարու վիզի հեծած են և մէկ գաւաթ ջուրի վրայ հագար անէծք, հայհոյանք, կագ ու կոխի անպակաս էին: Ուժեղը կը յաղթէր ու տկարներն անօգնական կը մնային՝ պարտուած նոյն իսկ իրենց հարազատներէն:

Հացի բաշխումը աւելի դժուար էր. չէի կարող իւրաքանչիւրին իր բաժինը տալ, որովհետև կը յարձակէին վրաս և հացը կորզելու համար ձեռքերս կը ճանկոտէին. ստիպուած էի հեռուէն նետել և աչքերս կը դարձնէի չի տեսնելու համար, թէ ինչպէս հացը ինկած տեղը սոսկալի և լռին պայքար մը տեղի կուեննար:

Վերջի բաց վակոնը, որ ոչխարներու փոխադրութեան յատկացուած էր, անգամ մը կեցած էին երկու կին իրենց երեխաներով. ասոնք քղեցիներ էին՝ բոկոտն, ցնցոտիներով ծածկուած, որոնց պատռուածքներէն իրենց մարմնոյն ամեն կողմերը կերևային: Բերած հացս սպառած էր, բայց անոնք աղերսանքով ուտելիք կուզէին և աղեխարշ ձայներով կը պաղատէին. ստիպուած՝ չորցած հացի կտորներ գտայ և թաշկինակի մը մէջ կապելով, նետեցի իրենց. անմիջապէս երկու կիները մէկանց վազեցին հացին վրայ, իսկ մանուկները սողալով կը հետևէին իրենց. պահ մը տեսայ իրենց՝ արևէն սևացած երեսները, ցցուած ժանիքները, փոսացած աչքերը վայրի ու տազնապալի կիրքով մը վառուած, որովհետև անողոր պայքարի մը կը պատրաստուէին: Յառաջ եկաւ մեծ կոխի. անոնք անխօս, կտրուկ ու հապճեպ շարժումներով կը պայքարէին և մանուկները ապշած իրենց մայրերէն՝ սոսկալով կը դիտէին: Երկար տևեց մաքառումը, որու միջոցին այնքան իրար ճանկոտած էին, որ իրենց մորթը պատառ պատառ՝ երեսներն ի վար կը կախուէր: Մէկը յաղթեց վերջապէս և տապալեց միւսը, որ ինկաւ գետին. գաւակները լալով դէպ իրենց մայրը դիմեցին. իսկ յաղթող կինը, չորացած հացերը առնելով, թաշկինակը պատռեց, չի համբերեց քակելու, սկսաւ ուտել կատաղաբար, իսկ իր աղերսող որդիներուն տուաւ մէկ մէկ կտոր:

Վակոններու մէջ կը գտնուէին մանուկներ, որոնց մայրերը մեռած էին ճամբորդութեան ընթացքին. այս անօգնական որբերը մէկ կողմ դիզուած կը մնային և ընդհանուր խառնաշփոթութեան մէջ չէին համարձակէր յառաջանալ, ջուր խմել. միւս կիները, որ մոռցած էին նոյն իսկ իրենց հարազատ զաւակները, ամեննին չէին հոգար այս խեղճերը, այնպէս որ երկաթուղիի ընկերութեան հեռագիրները հոս հոն գրեթէ ամեն օր կիմացնէին, թէ ծարաւէն մեռան 10 – 12 մանուկներ: Եւ այս կառախումբերը կանցնէին այնպիսի կայարաններէ, ուր մեծ դիրութիւններ կան ջուր բաշխելու:

Պէտք է նկատողութեան առնել նաև, որ այս թշուառ և բթացած ամբոյսը մաս կը կազմէ հարուստ, կրթուած, նրբացած ժողովուրդի մը. անոնք մեծ մասամբ քաղաքացի էին և բնական վիճակի մէջ ընտանեկան սէրը, իրարու մասին գուրգուրանք և զոհողութիւն իրենց ամենաբարձր առաքինութիւնները կը կազմէին: Երկարատև և անլուր դժբաղդութիւնները խեղաթիրած էին ոչ միայն իրենց ֆիզիքական երևոյթը, այլ և իրենց հոգին, և անոնք դարձած էին ունէ մարդկային զգացումէ գուրկ անասնային արարածներ՝ կառչած յուսահատօրէն կենդանական կեանքին և որոնց մէջ մէկ զգացում, մէկ արհաւիրք կը տիրապետէր այլևս՝ անօթութիւնը և ծարաւը:

Անգամ մը, երբ վակոնին դուռը բացի ջուր տալու համար, կնոջ այլակերպ երևոյթ մը ցցուեցաւ դիմացու. ամենքը կը վախնային անկէ և կը հեռանային, այնպէս որ շուջը պարապ մը ձգած էին: Զիս տեսնելով, աքսորեալները պաղատագին խնդրեցին, որ դուրս հանեմ զինքը և ըսին, թէ կատաղի խելագար մըն է:

Կինը իր սուր և խոժոռ նայուածքը պրտտցուց ամենուն վրայ, երեսն ի վար ինկած թնջուկ մազերը ետն նետեց և ջուրի դոյլը բարձրացնելով բերնին, սկսաւ անյազաբար խմել, յետոյ ինձ նայելով ըսաւ.

– Ես խենթ չեմ, եղբա յր:

Հակառակ որ ջուրը սառն էր, անիկա իր ծարաւը չի յազեցուց և ըսաւ տրտնջալով.

– Աս տաք է, ինձ պաղ ջուր տուր:

Երբ բաւական հանգստացաւ, գլուխը շարժեց ջրաձգօրէն և կրկնեց.

– Ես Գէորգ աղայի աղջիկն եմ, ես խենթ չեմ:

Ձեռները ամբողջութեամբ արհիւնտ էին և մատները կը կրծկէր, կարծես երևակայական բան մը փարատելու համար և անիկա այնպիսի նայուածք մը ունէր, որ թիրք զինուորներն իսկ չի կրցան դիմանալ անոր վայրագ արտայայտութեան և վախենալով փախան հեռու:

Երկաթուղիի ամեն ազգէ քրիստոնէայ պաշտօնեաները խոր կերպով ազդուած էին ամեն օր պարզուող թշուառութեան այս պատկերներէն, բայց իրենց կարեկցութիւնը հիմնական արդիւնք չէր կարող ունենալ: Երբ հանդիպէին բաց դաշտերու վրայ մնացած, մոռցուած կամ փախած մանուկներու և աղջիկներու, կառավարու-

թենեն գաղտնի կը պահէին սնդուկներու մէջ կամ ապրանքներու ներքն և կը փոխադրէին Հալէպ: Այսպէս անցաւ սերաստացի 15 տարեկան տղայ մը, որ աղջիկի հագուստներ հագած էր և հայաստանցի միակ այր մարդն էր, որ հանդիպեցայ այնքան անցնող անվերջ բազմութիւններու մէջ: Երբ զգաց, որ հասկցայ իր ծայտուած ըլլալը, սարսափահար խնդրեց, որ ոչ ոքի չի յայտնեմ ատիկա:

40 վակոնով կազմուած կառախումբ մը գրեթէ բոլորովին պարապ եկաւ Ճարապլուս. այցելելով վակոններուն, հանդիպեցայ երզնկացի կնոջ մը:

– Ի՞նչպէս կըլլայ, որ հանգիստ թողեր են քեզ և մենակդ կը ճամբորդես, հարցուցի:

Կինը լսելով հայերէն խօսքեր, ցնցուեցաւ և սկսաւ արտասուել, յետոյ սկսաւ պատմել.

– Իմ մէկ աղջիկս, որ շատ գեղեցիկ է, կարողացայ պահել Երզնկայէն մինչև Արար-Փունար առատ կաշառք տալով ամենուն: Արար-Փունարի մէջ քրիստոնէայ ալման մէնէնտիչ) մը, երբ տեսաւ աղջիկս, շատ հաւնեցաւ և ըսաւ, թէ հայերու և ալմաններու մէջ տարբերութիւն չի կայ, քրիստոնէայ են, և համոզեց զիս ու աղջիկս առաւ, ըսելով, թէ հետը պիտի ամուսնանայ: Հրաման ըրաւ նաև, որ զիս ապահով հասցնեն Հալէպ և խոստացաւ՝ 2 – 3 օր ետք աղջկանս հետ ինքն ալ կու գայ և Հալէպի մէջ կը պսակուին: Առաջարկեցի, որ աղջիկս ինձ մօտ մնայ, բայց անիկա ըսաւ. «Ոչ, աւելի լաւ է ինձ հետ կենայ և վարժուի իմ բնութեանս և լեզուիս»:

Նոյն կինը պատմեց Երզնկայի տեղահանութեան մասին հետևեալ կերպով.

Կառավարութիւնը 24 ժամ միջոց տուաւ հայերուն, ուրկէ ետքը ամենքն ալ պէտք էր հեռանային քաղաքէն: Յուսահատութիւնը տիրեց ամենուն. բայց առաջին դիմումներէն իսկ հասկցուեցաւ, թէ հրամանը վճռական էր և իշխանութիւնը զիջող պիտի չըլլար ոչ ոքի: Այն ատեն հապճեպ կերպով ամբողջ քաղաքացին պատրաստուեցաւ և ամեն մէկը իրենց հետ առին իրենց դրամական կամ ոսկեղէն հարստութեանը մէկ մասը: Վաճառականական տուններու ապրանք, առնելիք ու տալիք, շարժուն և անշարժ հարստութիւն՝ ամեն ինչ և ամբողջովին մնաց թշնամիին ձեռքը:

Դպրոցի տնօրէնը և իր կինը և ուրիշ հարուստ երզնկացի մը հասկցան, թէ ինչ կըսպասէր իրենց և ինքզինքնին թունաւորեցին:

24 ժամը լրանալէն ետքը ամբողջ ժողովուրդը, այր և կին խառն, ժողովելով՝ ճամբայ հանեցին. սկիզբները բաւական լաւ կը վարուէին և այնպէս կը ձևացնէին, թէ հսկողութիւնը խիստ է. բայց երբ հասանք Քեմախի պողազը\*, յանկարծակի ժանտարմաներուն վերաբերմունքը փոխուեցաւ: Զինուորական մը իր ժանտարմաներով սկսաւ հաւաքել այն հարստութիւնը, որ իրենց հետ առած էին տարագ-

րեալները: 50,000 կանխիկ ոսկի, դեզ մը զարդեղեններ յանձնուեցան զինուորներու, որոնք այդ բոլորը տարին իրենց հետ տրուած հրահանգին համաձայն: Կողոպտուած հայ ժողովուրդը, սրտաբեկ և զգալով նոր դժբաղդութիւններ, ժանտարմաներու հրամանին համաձայն դուրս ելան պողազէն (կիրճ) և ահա անմիջապէս քիւրդերու խուժան մը դիմաւորեց մեզ: Հող կիները և այրերը բաժանեցին իրարմէ և այրերը, որոնք բոլորովին անզէն էին, առաջնորդեցին մերձակայ բլրակի մը քով, ուր սկսան կոտորել անխնայ՝ բիրերով, քարերով չարաչար սպաննելով և զլուխները ջախջախելով: Աղիողորմ և օրհասական աղաղակները կոտորուողներուն աշխարհս բռնած էին. յուսահատական և անկարող զայրոյթներ կը թնդային, որոնք երբեմն կը խափանէին բիրտ հարուածներուն աղմուկը: Կիներ, աղջիկներ կուլային, կը պոռային, կուզէին երթալ դէպի իրենց հարազատները, իրենց կոտորուող սիրելիները, բայց ժանտարմաները խարազանի հարուածներով կը զսպէին զիրենք ու արցունքի հետ յաճախ արիւն կը հոսէր վիրաւորուած դէմքերու վրայէն:

Քիւրդ խուժանը՝ մինչև կէս օր լրացնելէ ետքը իր գործը՝ եկաւ կիներու խումբին քով. երբ ընտրեցին գեղեցիկ աղջիկներն ու տարին, այն ատեն ժանտարմաները մեզ առաջնորդեցին մեծ աղբիւրի մը մօտ և հոն արգելեցին մեզ ջուրին մօտենալ: Ծարաւ էինք, այրուած էինք, բայց աղբիւրին քով երթալ անկարելի էր. խելքերնիս կորսնցուցած, սրտերնիս արիւնոտ՝ խոնուած էինք իրարու մօտ և յուսահատութենէ ու ցաւէ կը գոչէինք ժանտարմաներու անկարեկիւր աչքերուն տակ, որոնք կը հեզնէին մեր ցաւը ու կը ծաղրէին մեզ: Մինչև երեկոյ այս դրութեան մէջ սպասելէ ետքը ստիպուեցանք մէջտեղ հանել թաքնուած դրամ և զարդեղէն և կաշառել ժանտարմաները, որով միայն հաւանութիւն առինք ջուր խմելու:

Ժանտարմաները ամեն երեկոյ մեզմէ կը պահանջէին մէյ մէկ կոյս աղջիկ. եթէ չի տայինք, մեզ ծարաւ կը ձգէին, առանց ունէ հանգիստ շնորհելու մեզ կը քայեցնէին. երբ սպառած յոգնութենէ, ծարաւէ՝ կը խնդրէինք դադար կամ ջուր, իրենց պահանջքը կը կրկնէին և տեղի չէին տար, մինչև որ գոհացում չի գտնէին:

Այս պայմաններու մէջ կատարեցինք ճամբորդութիւնը Երզնկայէն մինչև Սամսաթ, որու միջոցին անօթութենէ, ծարաւէ կը մեռնէին միշտ որոշ թուով մանուկներ և ծեր կիներ: Քիւրդեր կամ թիւրքեր մեր խումբը տեսնելով, կը վազէին կու գային և կը տանէին աղջիկներ ու հարսեր, քանի մը դրուշով վարձատրելով հսկող ժանտարմաները:

Հասանք Սամսաթ, մնացինք մէկ ամբողջ օր: Տեղւոյն թիւրքերը կը մտնէին մեր մէջ անարգել և բռնանալով կամ վճարելով, կառնէին մանուկներ և աղջիկներ, այնպէս որ, երբ Արաբ-Փունար հասանք, աղջիկ չէր մնացած մեր մէջ:

Ուրիշ օր մը վակոնին մէջ չմշկածագցի կին մը կը պատմէր.

Քիւրդ ցեղի մը պէյը մեզ ուղարկեց 70 ջորի և լուր տուաւ, թէ թիւրք կառավարութիւնը մեզ պիտի կոտորէ, որով կառաջարկէր. «Այն, որ կարող է, ջորիով կամ հետիոտն գայ իմ մօտս ապաստանի»: Մեր շրջանի չորս գիւղերու հայ բնակիչները ամբողջութեամբ փախան պէյի մօտ, բայց մեզ անհնար եղաւ այդ հրաւերին պատասխանել, որովհետև կառավարութեան ժանտարմաները եկած էին արդէն: Մեզ ժողովեցին հապճեպով և տարին: Էրիկ մարդիկ բաժնեցին, դրկեցին Խարբերդ, իսկ մեզ լեռներու միջով երկար և դժուար ճամբաներով հետիոտն բերին մինչև Արար-Փունար:

Այս արքայաւորները նոյն ճամբէն անցնելով, կրած էին Երզնկայի հայ ժողովուրդին կրած տառապանքներուն նման չարչարանքներ:

Երբ թիւրք կիները կիմանային, որ հայաստանցի հայեր պիտի անցնին Ճարապլուսի կայարանէն, խումբերով կու գային և անպատմելի խայտառակ խօսքերով կը հայիոյէին դժբախտներուն: Կրսէին, թէ իրենց որդիները Հայաստանի դաշտերնուն մէջ հայոց գնդակներէն մեռած են, թէ իրենց կրած նեղութիւններուն պատճառը հայերն են և այլն: Անոնք կը մօտենային վակոններուն և հակառակ հայ արքայաւոր կիներու դժբախտ և թշուառ երևոյթին՝ ամեն կարգի նախատինք կը թափէին անոնց վրայ: Կը թքնէին, կը քարկոծէին. պատահած է նոյնիսկ, որ թիւրք կիներ, մտնելով վակոնները, խեղդած են հայ կին մը կամ մանուկ մը: Իրենց ատելութիւնը այնքան սաստիկ էր, որ յաճախ կը յաջողէին գրգռել իսլամները տեղւոյն խաղաղ հայերուն դէմ:

Հայ բժիշկ մը, որ թիւրք անունով Ռասուլէյնէն կը վերադառնար, պատմեց, թէ Զիֆթեկէն մինչև Ռասուլէյն, որ 180 քիլոմէթր է, գիծին երկու կողմերը հայ կիներու և մանուկներու դիակները դիզուած են. իսկ կայարաններու երկաթուղիները ամբողջութեամբ արիւնով շաղախուած են. շատ տեղեր գիծերու միացման տեղը կազմուած եռանկիւնիին մէջ լճացած արիւնը խտացած է:

Այս բոլորը կը տեսնէին օտարները և գերմանացի զինուորականներ, կիներ՝ հետաքրքրուած կայարաններու մէջ ամեն օր պարզուող սոսկալի տեսարաններէն, կու գային լուսանկարելու համար և իրենց յուսացածէն աւելի արդիւնք ձեռք բերելով, գոհ սրտով կը վերադառնային:

«Գործ» (Բաքու), 1917, № 2, փետրուար, էջ 124–139:

*Տեղահան ժողովուրդը հետիոտն դեպի Հալէպ.  
Հարսի մը փախուստը. 70 էրզրումցիներու անցքը  
(էրզրումի տեղահանութիւնը):*

*Արաբների շրջանակէն Անջրդի գիւղացի հարս մը պատմեց այսպէս.*

*Ուրբաթ օրը կարմիր հաւկիթը խաշեցինք, բայց շաբաթ երեկոյին չի կրցանք ուտել: Նոյն օրը մեզ տեղահան ըրին մեր գիւղէն և ճամբուն վրայ կոտորեցին, թալլեցին, աղջիկները ու կիները տարին: Քիւրդ մը զիս փախցուց, բայց յաջողեցայ զայն խաբել և գիշերանց խուսափելով, վերադարձայ մեր գիւղը, ուր հայ չէր մնացեր: Քանի մը օր շրջակայքը թափառելով, քիւրդերու մօտ գտայ իմ ծանօթներս ու ազգականներս և անոնց հետ գաղտնի տեսակցելով, յորդորեցի ամենքն ալ, որ վտանգը աչք առնեն և փախին ինձ հետ: Երեք երիտասարդ կիներ եկան միացան ինձ և միասին ճամբայ ելանք դեպի Հալէպ): Գիշերները լեռներու մէջ պառկելով, ցորեկները ձորերէն անցնելով, առանձին, անօգնական, անօթի կը յառաջանայինք դանդաղ կերպով: Պահակներ կեցած էին ամեն տեղ և ամենէն աննշան անցքը պահուած էր պզտիկ պահականոցով մը. այնպէս որ ամեն անգամուն ստիպուած էինք երկայն շրջաններ ընել և մէկ երկու օր թափառել, որպէսզի չի հանդիպէինք պահակին: Մեր պատիւը և ազատութիւնը փրկելու համար մոռցեր էինք ցաւը, անօթութիւնը, յոգնութիւնը և ամեն տեսակ չարչարանքներ: Երբեմն սպառած կիյնայինք չոր հողին վրայ՝ ոտքերնիս արիւնտտած և ուռած և կը տնքայինք յոգնութենէ: Երբեմն կը կարծէինք, որ այլ ևս ոտքի չենք կարող կանգնիլ, բայց անօթութիւնը մեզ կը հարկադրէր խոտ փնտռելու, որովհետև մեր միակ սնունդը այդ էր: Բայց մեր ամենէն մեծ տանջանքը ծարաւն էր. յոգնածութիւնը, խոտակերութիւնը և արնին տաքութիւնը մեզ այնպէս մը ծարաւեցուցած էր, որ մեր պապակած լեզուն կը ծանրանար մեր բերնին մէջ և մեր չորցած ու վիրաւորուած շրթները չէինք կարող շարժել իրարու հետ խօսելու համար: Լռին և հապճեպ շարժումներով ջուր կը փնտռէինք և բարձրութիւններ մագլցելով, կը նայէինք, և ուր որ լճացած ջուր տեսնէինք, դեպի հոն կերթայինք անմիջապէս:*

*Անգամ մը հանդիպեցանք լճակի մը, որ մօրացած էր. շուրջը հողերը չորցած, ճեղքրտուած էին, իսկ լճակին եզերքը լպրծուն տիղմ մը կար, ուր մօտենալ փորձողը մինչև ծունկը կը խրէր և հազիւ կրնար ազատուիլ առանց ջուրին մօտենալու: Մեր ընկերուհիներէն մէկը այնքան կը տանջուէր ծարաւէն, որ հակառակ մեր զգուշութիւններուն նետուեցաւ ջուրին մէջ և չի կրնալով յենակէտ մը գտնել, ընկղմեցաւ ջուրին ներքև թանձրացող ցեխին մէջ: Հեռաւոր ճամբէն քիւրդ մը կանցնէր. ճարահաստ օգնութեան կանչեցինք զինքը. անիկա անմիջապէս եկաւ և համարձա-*

կութեամբ նետուելով ջուրին մէջ, ազատեց մեր ընկերուհին: Մենք այնքան ծարաւած էինք, որ երկար չէինք հետաքրքրուել մեր ընկերոջ վիճակով և անոր թրջուած փէշերը քամելով, սկսանք անյազաբար ծծել կեղտոտ հեղուկը:

Լսեցինք, որ չորս մակոյկով Եփրատի վրայէն հարուստ հայեր եկած են Պերէճիքի մօտ և կայանք ընտրած են բաց դաշտի մէջ: Ես (Հ. Թորոյեանը) գացի իրենց մօտ և տեսայ հետևեալը: Գետեզրի աւազին վրայ, խոռոչի մը մէջ ցիր ու ցան նստած էին 60 կին ու երեխայ և 10 այր, որոնց մէջ էին ինձ ծանօթ յայտնի ընտանիքներու պատկանող անձնաւորութիւններ, որոնք ամենքն ալ ձեռքերնին ձմերուկներ բռնած՝ կրծելով կուտէին: Ասոնք մասնաւոր արտօնութիւն ստացել էին Հալէպ հասնելու, որովհետև Էրզրումի երևելիներէն մեկուն եղբայրը, որ Հալէպի մէջ կառավարական բարձր պաշտօնեայ էր, յաջողել էր փրկելու իր եղբայրը և ընդարձակ ընտանիքը: Այդ Էրզրումցիներու գլուխը գտնուող անձը պատմեց այսպէս:

Կառավարութիւնը Էրզրումի մէջ մեզ 10 օր պայմանաժամ տուաւ քաղաքէն հեռանալու<sup>(1)</sup>: Այդ միջոցին թիրքերը մեզ հետ վարուեցան շատ քաղցրութեամբ և մեզ աւելի կատարելապէս խաբելու համար նոյնիսկ թոյլ չի տուին, որ ցած զինքերով մեր ապրանքները ծախենք, որովհետև կրսէին, թէ ասիկա ժամանակաւոր բան է և մօտ ատենէն կրկին պիտի վերադառնանք մեր քաղաքը: Կը յորդորէին, կը խոստանային և ամեն կերպ անուշելով, կը ջանային ընել այնպէս, որ մենք չի հասկնանք, թէ ինչ պիտի գայ մեր գլխուն: Այսուամենայնիւ հայերը ժողով կազմեցին և խորհրդակցեցան իրենց բռնելիք ընթացքին վրայ: Երիտասարդները կառաջարկէին չի հնազանդիլ կառավարութեան հրամանին, կը պնդէին նոյնիսկ, որ պէտք էր դիմադրել և չի մեկնիլ մեր տուներէն, կռուել և ի հարկին կռուի մէջ իյնալ: Բայց հարուստները և տարեց մարդիկ դէմ էին բուռն միջոցներու. նախամեծար կը համարէին ենթարկուիլ կառավարութեան հրամանին և այդպիսով կը կարծէին փրկել ժողովրդին կեանքը, մինչդեռ անհնազանդութիւնը, մանաւանդ բռնի ոյժով դիմադրութիւնը վերին աստիճանի աղետաբեր կրնար ըլլալ ամենուն համար: Խոհեմութեամբ վարուել քարոզողներու քուն մեծամասնութիւն շահեցաւ, և Էրզրումի հայերը որոշեցին տեղահան ըլլալ առանց ունէ դիմադրութիւն ցոյց տալու:

Տասը օրուան պայմանաժամը լրանալէ ետքը կառավարութեան աջակցութեամբ վարձեցինք կառքեր, սայլեր, ձիեր, էշեր, ջորիներ և բեռցուցինք մեր թանկագին իրեղէնները և մեր հարստութեան մեկ աննշան մասը և 11-րդ օրը գայմագամի ու 100 պաշտպան զինուորներու ուղեկցութեամբ ճամբայ ելանք մեր հայրենի քաղաքէն դէպի Երզնկա: Կառավարութեան բարձր պաշտօնեաները իրենց յարգանքը յայտնելու համար մեկնող ժողովուրդին՝ խմբով ողջերթի եկան մինչև Էրզրումի դռները և ամեն կարգի քաղաքավարական պատիւներով մեզ ճամբու դրին:

Դժուար և դառն բան էր նոյն իսկ ժամանակաւոր կերպով մեր տունն ու տեղը, մեր հարստութիւնները թողուլ և երթալ, բայց թիրաքերու մեզ ցոյց տուած վերաբերմունքը մինչև վերջին պահը այնպէս էր, որ կասկածը իսկ չունեցանք այն սարսափելի դէպքերուն, որոնց սահմանած էին մեզի: Էրզրումէն մինչև Երզնկա մեզ ընկերացող գայմագամը և զինուորները վերջին ծայր ակնածութեամբ կը վարուէին մեզ հետ, նոյն իսկ զինուորները չէին մօտենար կիներու խումբերուն և կը քալէին հեռուներէն: Բաբերդի մօտ տեսանք, որ 2 – 3 դիակներ ընկած են դաշտին մէջ, բայց դարձեալ չի խորհեցանք, որ ասիկա թիրաքերու կողմէ կատարուած ոճրագործութիւն մըն է, և այսպէս հասանք Երզնկայի մոտ, ուր բաց դաշտին վրայ կայանք առաւ արտրեալ ժողովուրդը: Ես և մի քանի ծանօթներ գացինք Երզնկա քաղաքը մեր գործերը կարգադրելու և տուն կամ սենեակ վարձելու, որպէսզի փոխադրենք մեր ընտանիքները: Բայց երբ մտայ Երզնկա, սոսկումը և ապշութիւնը զիս պատեց. հայերու շուկան դատարկ, տուները բաց և պարապ և ամբողջ քաղաքը ամայի. մէկ հայ չէր մնացեր... Շփոթած, յուզուած դիմեցի կուսակալին, բայց անիկա խուսափեցաւ պատասխանելու իմ հարցումներուս և անմիջապէս զիս տեղեկացուց, թէ Հալէպէն հրահանգ դրկած են իրեն, որ զիս և իմ ընտանիքս ժանտարմաներու ընկերակցութեամբ ապահով հասցնէ Հալէպ: Այն ատեն հասկցայ ամեն ինչ և մէկ անգամէն ըմբռնեցի, թէ ի՞նչ դժբախտութիւն եկեր էր մեր գլխուն: Շտապով ուզեցի մեկնիլ, բայց կուսակալը պնդեց, որ սպասեմ և առանց ինձ յատկացուած ժանտարմաներուն ճամբայ չելլեմ, որովհետև ամեն հայ այլևս սպառնալիքի ներքև էր: Քիչ յետոյ ժանտարմաներով հասայ այն դաշտը, ուր Էրզրումի հայ ժողովուրդը կանգ առած էր, և մէկ ակնարկով տեսայ սոսկալի դրութիւնը: Էրզրումէն մեզ հետ եկող գայմագամը և զինուորները անհետացեր էին և դաշտը ծածկուած էր քիւրդերէ, թիրաքերէ և զինուորներէ կազմուած խուժանով մը, որոնք խառնուած էին անպաշտպան ժողովուրդին մէջ, կը կողոպտէին, կը կոտորէին և կը տանէին պատահածին. ճիշ, աղաղակ, ցաւի և յուսահատութեան գոչիւններ կը խառնուէին թշնամիին հայհոյութիւններուն և ծաղրանքներուն: Ես հազիւ կարողացայ ինձ հետ եղող ժանտարմաներու օգնութեամբ ազատել ընտանիքս և մէկ քանի բարեկամներ, իսկ մնացած հազարաւոր ժողովուրդը ցիր ու ցան եղած էր. շատեր ոտքերու տակ կոխոտուած էին. մանուկներ, ծեր կիներ՝ իրենց դեռ նոր մորթուած սիրելիներուն կառչած՝ կուլային և կը ճըւային, հազարաւոր դիակներ փռուած էին ամեն կողմ, որոնք մահը ստացեր էին վիրաւորուած գլխէն, փորէն և զանազան սոսկալի եղանակներով: Փոքր մաս մը այդ մեծ բազմութենէն ցան ու ցրիւ եկած էր լեռներու և դաշտերու մէջ, իրար կորսնցուցած, խելակորոյս վիճակի մէջ: Այն կարաւանը, որուն յանձնած էի իմ մետաքսի հակերս և արժէքաւոր իրերս, նոյնպէս անհետացած էր:



Այս իրարանցումի միջոցին հասաւ Տրապիզոնի արքայական հայերու մէկ խումբը, որուն մէջ էին երկու յայտնի վաճառականներ. ասոնք եկան միացան ինձ, իբր իմ ընտանիքիս անդամ, և մենք առանց դադարի կազմեցինք մեր փոքր կարաւանը և անցանք դէպի Քեմախ: Այդտեղ Քեմախի կիրճին մէջ զինուորական մը ձեռքակալէց իմ անդրանիկ որդիս՝ 28 տարեկան և իր ընկերը: Հակառակ իմ աղերսանքներու և խոստումներու՝ անիկա չի յանձնեց որդիս, խոստացայ մինչև 20,000 ոսկի՝ զաւակս փրկելու համար, բայց զինուորականը անդդուելի մնաց: Ստիպուած՝ սուգը սրտներիս թողուցինք մեր անդրանիկ որդին և անցանք Մալաթիա, ուր ուղեցի մեր վաճառականական մասնաճիւղերէն քիչ մը դրամ առնել, բայց քաղաքը բռնաբարուիլն դատարկ էր. հոս ալ հայ չէր մնացած և քիչ մնաց, որ ես ինքս գոհ երթայի իմ յանդգնութեանս:

Շարունակեցինք մեր ճամբան և մօտակայ գիւղի մը մէջ կանգ առինք գիշերելու համար: Տեղույն պէկերէն մէկը մօտեցաւ մեր խումբին և երկար որոնելէ ետքը հանեցաւ Գավաֆեանի նոր հարսին: Մեզ հետ եղող ժանտարմաները ջանացին պաշտպանել երիտասարդ կինը, բայց պէկը զայրացաւ այդ ընդդիմութենէն և սպառնաց իր մարդիկներով բնաջինջ ընել մեր ամբողջ խումբը, եթէ այդ կինը չի յանձնուի իրեն: Գավաֆեանի հարսը, որ կորսնցուցած էր իր ծնողքը, ամուսինը և գրեթէ ամբողջ ընտանիքը, և բոլոր ժամանակը մտայլ յուսահատութեան մէջ էր, տեսնելով որ իր մասին յառաջ եկած վէճը կրնայ վտանգաւոր դառնալ, կամովին յանձնուեցաւ պէկին՝ մեր խումբը յարձակումէ փրկելու նպատակաւ:

Գավաֆեանը Էրզրումի հարուստ վաճառականներէն մէկն էր և կառավարութեան յանձնած էր 20,000 ոսկիի արժողութեամբ շաքար, սուրճ և դրամ. վճարած էր իր 3 որդիներուն պէտէրը և աշխատած էր բանակի պարենաւորման գործերը դիրացնելու և կանոնաւորելու: Բայց և այնպէս իր երեք որդիները և կինը սպանած էին իր աչքերուն առաջ և ինքն ալ չի դիմանալով վիշտին, յանկարծամահ եղած էր Երզնկայի մէջ:

Հասանք Սամսաթ, ուր մնացինք երեք օր: Սամսաթի ամբողջ հայերը քշուած էին և մնացեր էին միայն քանի մը հայ կիներ, որոնք շուկային մէջ քեպապճիներու, սրճարաններու մէջ կաշխատէին իբրև ստրուկ: Հանդիպեցայ չոպանի մը, որ ունէր հայ կին մը և երկու հայ սպասուհիներ: Զիս համարելով հասկացող մարդ, ցոյց կուտային թիթեղէ ամաններով լեցուն ոսկի մատանիներ, զարդեր, որոնք վերջին ծայր աստիճանի գինով կը ծախէին: Պագարին մէջ դիզուած էին հազարաւոր գորգեր և շատ թանկարժէք իրեղէններ: Ամեն ոք գոռոզացած և լրբացած էր, և նոյն իսկ մեզ ընկերացող ժանտարմաները, երբ փոքր ծառայութեան մը փոխարէն 100 ոսկի պարգև կուտայի, չէին ընդուներ, ըսելով թէ քիչ է:

*Պերեճիքէն անցնող հայերու խումբեր. Մուրա՛տ),  
Մուրա՛տ, մեր մուրատը կատարեցիր:*

Մօտ 20,000 հոգի կին և երեխայ, որոնք զանազան վայրերէ տեղահանուած հայեր էին, մեծամասնութեամբ խարբերողի և էրզրումցի և որոնք կը գտնուէին Եղեւսիոյ մէջ (Ուրֆա), կառավարութեան հրամանով տեղափոխուեցան Պերեճիք: Այստեղի թիրաքերը, որ ծայրայեղ կերպով հայատեաց էին և կըսպասէին այսպիսի առիթի մը, թափուեցան քստրեալներու մէջ և՝ «Ասոնք մեր գերիներն են, մեր դէմ կռուող ժողովուրդն է» ըսելով, սկսան կողոպտել և առնանգել: Ամեն մէկ թիրաք աղջիկ մը կամ կին մը վերցուց. նոյն իսկ 12 տարեկան աղջիկները տարին կնութեան առնելու համար: Ծեր կիներ, սէպապ է (Աստուծոյ ընդունելի է) ըսելով, կուգային, աղջիկներ կը տանէին իրենց բացակայ որդիներուն համար: Թիրաք ժողովուրդին թոյլատրուած էր ամեն տեսակ վարմունք և հայ քստրեալները ենթարկուած էին անոր քմահաճոյքին և ոչ մէկ բան զիրենք կը պաշտպանէր ամեն կարգի նախատինքներու, կամայականութեանց դէմ: Իմ ծանօթներէս մէկը՝ Հասան էֆէնդի, որ 50 տարեկան մարդ էր, ինձ կըսէր առանց քաշուելու.

– Տասնհինգ տարեկան աղջիկ մը կար, շատ ալ գեղեցիկ. որքա՛ն համոզեցի, որ իր կամքով ամուսնանայ հետս, անիկա մերժեց. ես մեղքցայ զինքը և չուզեցի բռնանալ և իմ եղբօրս տուի, որ ինձմէ 10 տարով փոքր է:

Աքստրեալները երկու շաբաթ մնացին Պերեճիքի դաշտին մէջ. այլևս ոչ աղջիկ մնացած էր իրենց մէջ, ոչ մանուկ, որովհետև ոչ միայն տեղացի ժողովուրդը, այլ և շրջակայ գիւղերու գիւղապետները կառավարութեան հրամանով եկան և իրենց բաժին ինկած աղջիկները ու մանուկները տարին: Մնացեր էին միայն պառաւներ և հիւանդացած երեխաներ, որոնք յաջորդաբար մահացան և այսպիսով 20,000 հոգինոց քստրեալներու խումբը բնաջինջ եղաւ:

Գարաճեան անունով հայ կին մը, որ Պերեճիքի շրջակայ գիւղերէն մէկուն մէջ թիրաքերու ձեռք ինկած էր, լսելով որ մօտերը հայեր կան, հետևեալ երկտողը յաջողած էր դրկել.

«Ես և աղջիկս ողջ ենք. իմ ամուսինս կը գտնուի Ամերիկա. խնդրեմ իրեն նամակ գրէք, որ գայ մեզ ազատէ: Մենք անտանելի չքաւորութեան մէջ ենք, խնդրեմ մեզի օգնեցէք դրամով»:

Տասը տարեկան քիւրդ պատանի մը իրենց գիւղը գտնուող հայ կիներու մասին կը պատմէր այսպէս.

«Ամեն առաւօտ անպատճառ կը լուացուին և շատ ջուր կը գործածեն. չեն ուզեր մեր քով նստիլ, կըսեն, դուք աղտոտ էք, ձեր վրայէն վատ հոտ կուգայ. մեր տուած հացը չեն ուտեր, ըսելով, թէ չոր է. կըսեն, մեր երկիրը լաւ կուտէինք:

Հարցուցի քիւրդին.

– Տղայ, ինչո՞ւ չոր հաց կուտաք:

Անիկա պատասխանեց.

– Հայրս մասնաւոր չոր հաց կուտայ, որ մեռնին. հետզհետէ գրգռուելով, քիւրդ տղան աւելցուց.

– Կեաւոր կնոջ աղջիկը ուզեցինք եղբօրս համար, չի տուին, ի՞նչպէս մենք անոնց կակուղ հաց տանք. բայց ունին իմ տարիքիս փոքր աղջիկ մը, որ շատ լաւ հէքիաթներ կը պատմէ, ես այդ փոքր աղջիկը շատ կը սիրեմ:

Սենեակիս մէջ նստած էի, երբ թիւրքերուն ձայնը լսեցի, որ կը պոռային.

– Եւսիր կէլեռ, եւսի՛ր, եւսի՛ր (գերի կուգայ կոր, գերի, գերի):

Թիւրքերը հայերը կանուանէին կամ եւսիր կամ մուհաճիր (գերի կամ գաղթական):

Միջօրէ էր և սաստիկ տաք. արևը այնքան կիզիչ էր, որ թռչունները մտած էին ժայռերու շուքին ներքև. սենեակին մէջ ջերմաչափի աստիճանը բարձրացած էր մինչև 42: Հակառակ այս տօթագին ժամուն, արտրեալները կը քալեցնէին և ես հետաքրքրութենէ մղուած՝ դուրս վազեցի և թիւրքերու մէջ խառնուելով, գացի դիմաւորելու հայերը:

600-է աւելի բազմութիւն մը կիջնէր բլրակէ մը դէպի ընդարձակ և աւազուտ դաշտը: Անոնք ոչ թէ կը քալէին, այլ կը գլորուէին. երբ տեսան Եփրատը, իրենց ուղին փոխելով, դիմեցին դէպի ջուրը. մանուկները ետ չի մնալու համար՝ իրենց մօրը քղանցքներէն կախուած կըշտապէին դէպի գետը. յի կիներ պապակած չէին կարող քալել և նստած էին աւազին վրայ. ծեր կիներ, չորացած տիկերը պատրաստուելով, դէպի ջուր կերթային. երիտասարդ ու մանուկ, խելայեղ, հնիհն դէպի գետը կը վազէին և այդ թշուառացած, անօթի և ծարաւած բազմութիւնը մահուան սարսափի դառնութիւնը զգալէ ետքը՝ կարծես դէպի կեանքը կը վազէր... հակառակ որ Եփրատի ափունքը տակաւին դիակներով լեցուն էին և ջուրը ապականուած էր նէխութիւններով:

Խումբին ետևը մնացեր էին 7 – 8 բոկոտն տղաք և աղջիկներ, որոնց ոտքերը աւազի տաքութենէն խաշուած ըլլալով, կը կաղային և կուլային:

Ժանտարմաները տեսնելով, որ իրենց առաջնորդած խումբը դէպի ջուրը կուղդուի, ձիերնին մտրակելով, հասան դէպի արտրեալները և սկսան գոռալ, կոչել, խարազանել և խումբը ետ դարձուցին: Ողբ ու լացը, աղաչանք, ժանտարմաներու հայհոյանքը, մտրակներու շաչիւնը իրար խառնուելով, բռնած էր աշխարհը: Ու պապակած ժողովուրդը առանց ջուրին մօտիկնալու անցաւ մեր առջևէն: Այդ պահուն լռած էին այլևս. բոլորն ալ յուսահատ, աչքերնին մոլորուն, այլանդակուած դէմքերով, որոնցմէ շատերը կապտած էին խարազանի հարուածներէ. ձայն,

ծպտուն չէր լսուեր, բոկոտն ոտքերու թաւ աղմուկը կը խշրտացնէր միայն արևէն տաքցած աւազը, և կամ մանուկներ ժանտարմաներու հեռաւորութենէն քաջալերուած՝ մօրերնուն կը ցուցնէին գետը, ջուր խնդրելով:

Աքտրեալները ճամբուն վրայ ձգեցին երկու դիակներ. յղի կին մը և մանուկ մը: Դիակները անթաղ մնացին. երկրորդ օրը թիւրք մը դրկեցինք, լայնօրէն վարձատրելով, որ երթայ թաղէ գանոնք. վերադարձին կը պատմէր, թէ դիակները մերկ էին. գիւղացիները կողոպտեր էին անոնց ցնցոտիները, ինչպէս միշտ կը պատահէր:

Աքտրեալներուն ետնէն կուգար ժանտարմաներու տասնապետը, որի շուրջը հաւաքուեցան տեղացի թիւրք հանդիսատեսները, ասոնց մէջ էր հայատեաց պէրէճիկցի Հոջա օղլին, որ տասնապետին ուղղելով խօսքը, ըսաւ.

– Պերատէր (եղբայր), ինչո՞ւ քեզ կը յոգնեցնես այդ քածերուն համար. երբ խօսքիդ չեն հնազանդիր, գետը նետէ անհնազանդները:

Յետոյ ոգևորուած աւելցուց.

– Ճանրմ, սէվտիի Մուրատը (հոգին սիրելի Մուրատ գետը) օրական քանի՛ այսպէս դիակներ կը տանի:

Անդիէն ուրիշ մը աղաղակեց.

– Ա՛խ Մուրա՛տ, Մուրա՛տ, մուրատնիս կատարեցիր:

Տասնապետը դիւային ժպիտով խնդաց ու ըսաւ.

– Ես լիազօր եմ, մահու և կենաց իշխանութիւն ունիմ. 600 հոգիէն 6 հոգի չի մնար... բայց ինչ հարկ կայ շտապելու... կամաց, կամաց, տակաւին ժամանակը չէ հասած, ամիս մը ետքը դուք կը տեսնէք, թէ ի՛նչ մնացած է այս բոլորէն:

Հալէպ. Թուրք եւ հայ յանձնախումբեր արտրեալներու տեղաւորման համար. Հալէպի հայ ժողովուրդին վերաբերմունքը. Հալէպի հայ ժողովուրդին վիճակը. Ընդհանուր պատկեր. Հայ մտավորականներու անցքը.

Զոհրապ եւ Վարդգէս:

Հալէպ վաճառականական և հարուստ քաղաք մըն է մօտաւորապէս 450,000 բնակչութեամբ, որոնցմէ 18,000-ը հայեր են: Կան քիչ թիւով հրեաներ, բայց քաղաքին ստուար մեծամասնութիւնը կը կազմեն իսլամ և քրիստոնէայ արաբները: Թիւրքերը թիւով քիչ են և բաղկացած են պաշտօնեաներէ և զինուորականներէ:

Հայ բնակչութիւնը կազմուած է այսպէս. 800 տուն տեղացի հայեր, որոնք արաբախօս են և նոյն իսկ աւետարանը կը կարդան արաբերէն լեզուով, և 1200 տուն է-

կուորներ, որոնք զանազան հայաբնակ գաւառներէ վաղուց ի վեր եկած տեղաւորուած են Հալէպի մէջ և հայախօս են:

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետքը հայերու մտաւորական և տնտեսական վիճակը արագ զարգացում ստացաւ: Զանազան կուսակցութիւններու և ժողովուրդին նախաձեռնութեամբ բացուեցան լսարաններ, թատրոններ, ժողովարան մը, ուր վիճաբանութիւններ տեղի կունենային ուսման և գրականութեան վերաբերեալ նիւթերու մասին: Հարուստ վաճառական Լևոն պէյ Աճէմեանի ծախքով բացուեցան մանկապարտէզներ: Հալէպցիները ունէին երկսեռ վարժարաններ, որոնց ծրագիրը կազմուած էր արդի կեանքի պահանջումներու համաձայն: Կազմուած էին ազգային երաժշտական խումբեր, աղջկանց գրադարան, իգական սեռի ազգասիրաց ընկերութիւն և կը հրատարակուէր կուսակցական խմորատիպ շաբաթաթերթ: Ձեռնարկներ եղան տպարան կազմելու և օրաթերթ մը հրատարակելու, բայց պատերազմը արգելք եղաւ:

Հայաստանի զանազան վայրերէն ապրանքներ կուգային և կը կենտրոնանային Հալէպի մէջ. ինչպէս՝ մորթ, խէժ, գիտոր, բուրդ, աղիք, նուշ, ընկուզ, իւղ և այլն: Հալէպի շուկան, որ մեծ մասամբ հայոց ձեռքն էր, մեծ կարևորութիւն ստացած էր: Արտասահմանէն եկած ապրանքները, որ նախապէս հրեաներու միջնորդութեամբ կը տարածուէին ներսերը, անցան հայոց ձեռքը, որոնք մեծ մթերանոցներ բացին: Պանքաները և մասնաւորապէս Տէօյ Օրիանդը մեծ վարկ բացին հայերուն: Գերմանական երկաթուղիի պաշտօնեաները, կապալառուները, բժիշկները գրեթէ ամբողջութեամբ, իսկ երկրաչափներու մէկ մասը հայեր էին:

Հալէպի գրեթէ բոլոր բժիշկները և դեղագործները հայեր էին, որոնցմէ ոմանք ունէին իրենց անձնական հիւանդանոցները. իսկ արհեստաւորները, մանաւանդ նրբակերտ գործերու համար, հայեր էին մեծ մասով:

Հալէպի մէջ կան գերմանական նախակրթարան, լատինական քոլէճ գիշերօթիկ, որ Հալէպի քրիստոնէաներու կետրոնավայրն է, ֆրանսիական կրօնաւորներու աղջկանց վարժարան, ուր կը դաստիարակուին Ատանայի որբուհիներ, և հայ կաթոլիկներու մանկապարտէզը: Այս օտար վարժարաններու մէջ հայ աշակերտ և աշակերտուհիները մեծ թիւ մը կը կազմեն:

Հալէպցի յայտնի և արժանահաւատ անձ մը պատմեց հետևեալը.

1915-ի ապրիլ ամիսէն սկսաւ Կիլիկիոյ տեղահանութիւնը: Կառավարութեան հրամանաւ կազմուեցաւ թիւրք յանձնախումբ մը, որուն դերը պիտի ըլլար հասնող գաղթականները տեղաւորել, անոնց համար գտնելով տուն, քարաւանսարայ և այլն և հայթայթել օրապահիկը, նպաստ տալով միայն ալիւր. մնացեալ պէտքերուն մասին կը հոգային տեղւոյն հայերը: Թիւրք յանձնախումբը ամեն օր կը տեղեկացնէր տեղահան եղած ժողովուրդներու ժամանումը, միևնոյն ատեն իմացնելով, թէ ո՞ր կողմէն կուգային, ինչ թիւով և այլն: Կիլիկեցի գաղթականները բաւականին

տեղափոխված էին և այր թե կին շուկաներուն մէջ կրգրադէին զանազան աշխատութիւններով, այնպէս որ իրենց տնտեսութիւնը կազմակերպուած էր, մանաւանդ որ նուազ ենթակայ ըլլալով կողոպուտներու, իրենց հետ բերած էին մաս մը դրամագլուխ. գաղթավայրին իրենց հայրենիքի մերձաւոր ըլլալը և կլիմայական գրեթէ նոյն պայմաններու մէջ գտնուիլը համեմատաբար նպաստաւոր վիճակ ստեղծած էին իրենց համար:

Բայց ահա իմացուեցաւ, որ կուզան հայաստանցի գաղթականները: Հայերը գացին դիմաւորելու զիրենք և քաղաքէն դուրս ճանապարհի վրայ տեղի ունեցաւ առաջին հանդիպումը: Ասոնք 2000-ի չափ բազմութիւն մը կը կազմէին կիներու և մանուկներու. մէկ այր մարդ չի կար. նիհարած, սևցած, ցնցոտիներով ծածկուած, անօթի և ծարաւ, անոնք այսահարներու երևոյթ ունէին. գետնի փոշին այնքան փչած էր երեսներնուն, որ հեռուէն հողագոյն զանգուած մը կերևէին, սեղմուած իրարու և կարծես անբաժանելի: Ասոնք քարացած կեցած էին և չէին գիտեր, թէ ուր պիտի երթան, ինչ պիտի ընեն. բողոքել կամ խօսել չէին կարող. ձայներնին կտրած էր, միայն երբեմն կին մը ա՛խ հառաչելով, գլուխը կը շարժէր, կամ մանուկ մը կիչնար յոգնութենէ սպառած, և այս վիճակին մէջ կըսպասէին: Մենք պահ մը կասկածեցինք, որ մեր փնտռածները ասոնք են, բայց երբ հասկցանք, որ այս թշուառները հայեր են, մենք ալ իրենց պէս սալշած մնացինք. չէինք կարող ոչ խօսել, ոչ քալել ու դէմ առ դէմ կանգնած լուռ ցաւի մէջ մնացինք. այսպէս եղաւ մեր առաջին հանդիպումը հայաստանցի հայերու հետ:

Վերջապէս սթափուելով մեր սալշութենէն, առաջնորդեցինք արտորեալները դէպի հայոց եկեղեցին: Ճանապարհին թիւրքեր, քիւրդեր, արաբներ, վրանաբնակ կիսավայրենիներ՝ բոլորն ալ զարմացած կը դիտէին և իրարու կըսէին. «Այսպէս մարդիկ ալ կա՞ն երկրիս վրայ»: Միայն արաբ շէյխերը հասկցան ամեն ինչ և ամեն անգամ կը բացականչէին.

– Սուբհան Ա՛լլահ ալէհէլ զըլըմ (Տէ՛ր Աստուած, այս ինչ գուլում է):

Հայաստանցի արտորեալներու այդ առաջին ժամանումէն ետքը ամեն օր թիւրք յանձնախումբը մեզ կը յայտնէր, որ նոր խումբեր կը հասնին գնացքով կամ հետիոտն. հետզհետէ եկողները ավելի վատթար դրութեան մէջ էին, ոսկրացած, անբանացած, շատերը մահամերձ, անոնք կորսնցուցած էին մարդկային երևոյթն իսկ: Հալէպի մէջ ժողովուեցաւ մօտ 70,000 տեղահան եղած ժողովուրդ, որոնք զանազան տեղերէ եկած խումբեր էին, մեծ և շէն քաղաքներու մնացորդներ: Պաֆրա, Տրապիզոն, Էրզրում, Տիգրանակերտ և այս քաղաքներու շրջակայքէն ցան ու ցրի կիներ ու մանուկներ, որոնք նոյնիսկ իրենց ընտանիքներու ամբողջութիւնը չէին պահած, որովհետև ամեն ընտանիք բաժան բաժան եղած էր զանազան վայրեր դրկուած խումբերու մէջ:

Տեղւոյն հայերը մեծ եռանդով և մեծ անձնուիրութեամբ կազմակերպեցին օգնութեան գործը. բժիշկները անդուլ և անդադար կայցելէին հիւանդներուն, իրենց գլուխը ունենալով տոքթէօն Սամուէլ Շմաւոնեան, որ Բարեգործական Ընկերութեան նախագահն էր. այդ հանգամանքով և անձնական ջանքերով և զոհողութիւններով այնքան աչքի ընկաւ, որ կառավարութիւնը զայն ձերբակալեց: Քանի մը օրէն ազատուեցաւ ազդեցիկ միջամտութիւններու շնորհիւ և կրկին սկսելով իր աշխատութիւններն, վարակուեցաւ և մեռաւ: Մեծ դեր կատարեց նաև կանանց յանձնախումբ մը, որուն անդամուհիները գրեթէ իրենց անձնական հոգածութեամբ պաշտպանած և ամոքած են 70,000 արքայականները: Իրենց ձեռքով կերակուր կեփէին ի հարկին, փողոցէ փողոց մուրալով, պարէն և հագուստ կը հասցնէին և իրենց անձնուիրութեան ոչ մէկ չափ և սահման չէին ընդունէր: Այս ամենուն աշխատանքը և կառավարութեան թեթև աջակցութիւնը բաւական ամոքեցին արքայական հայերու դրութիւնը: Տօքթէօն Սամուէլի հսկողութեան ներքև կազմակերպուած էր բժշկական խումբ մը և ուրիշ անձնաւորութեան մը ղեկավարութեամբ երիտասարդներու և պատանիներու խումբ մը, որոնք վերոյիշեալ կանանց հետ գիշեր ու ցորեկ կը տեղաւորէին ժողովուրդը, կը լուսային, կը մաքրէին, կը բուժէին, կը կերակրէին և կարելիութեան սահմանին մէջ գործ կը հայթայթէին աշխատելու ընդունակ և կարող արքայականներուն: Հալէպի հայ ժողովուրդը առհասարակ գրկաբաց ընդունած էր իր դժբաղդ ազգակիցները. իրենց տուները բացած էին գաղթականներուն առաջ, և ամեն ոք իր տան մէջ կը պատսպարէր 5-10 ծանօթ կամ անծանօթ արքայական հայեր: Բայց և այնպէս փողոցները, դաշտերը, անծանօթ անկիւններ լիքն էին հազարաւոր բնակիչ խեղճերով. մանաւանդ եկեղեցւոյ թաղը անտանելի պատկեր կը ներկայացնէր: Ճամբաները խճողուած և փակուած էին, տեղահանուածները կը քնանային փողոցներու մէջ նոյն իսկ իրենց կողկոտանքներուն մօտ: Անցուդարձը անհնար էր և օգնութեան գալը՝ վերին աստիճանի դժուար: Թէև անտուն ժողովուրդը տեղաւորուած էր բոլոր ազգային կալուածներուն մէջ՝ քարանասարայ, դպրոց, եկեղեցիին կտուրը, ամենուրեք, բայց դարձեալ այդ թշուառներու խճողումէն յառաջ կուգար շատ մեծ թիւով մահացում և աղօղիկներու, մանուկներու անհետացում:

Հետզհետէ կառավարութիւնը դադրեցուց նպաստը և փոխեց իր քաղաքականութիւնը: Խուզարկութիւններ կատարեցին տեղացիներու տուններուն մէջ և թէև ունէ կասկածելի բան չի գտան, բայց և այնպէս բանտարկեցին արքայականներու օգնող բազուկները, տեղացի հարուստներէն մէկ քանին և զիս. ասիկա պարզ ձևականութիւն մըն էր, տեսակ մը ազդարարութիւն. 24 ժամ բանտարկութենէ ետքը արձակուեցանք:

Միննոյն ատեն կառավարութիւնը յայտարարեց. որո՞ւ քով որ պահուած կը մնան արքայական մանուկ, աղօղիկ, կին և այլն, պէտք է շուտով դուրս վտարուին

տուներէն: Այն հալէպցիներ, որ հակառակ կառավարութեան յայտարարութեան՝ իր մօտ գաղթական կը պահէ, ինքն ալ տեղահան կըլլայ և կաքսորուի:

Տեղացի ժողովուրդին մէջ տիրեց սարսափ. գործող ուժերը ջլատուեցան և ամեն ոք յայտնապէս օգնելու կը վախնար: Գաղտնագողի եղած օժանդակութիւնը անբաւական էր: Աքսորեալ հայերը մնացին անօգնական. անօթութիւնը, հիւանդութիւնը, թշուառութիւնը միանալով, մահերու թիւը օր օրի աւելցաւ, մինչև հասաւ օրական 100-ի: Այնպիսի տագնապալի դրութիւն յառաջ եկաւ, որ նոյն իսկ օտարները սկսան բողոքել. օրինակ՝ գերմանացի պաշտօնէայի մը կինը՝ տիկին Քոխ, որ կօզներ իր շուրջը վիստացող թշուառներուն, բողոքեց կառավարութեան, ըսելով, թէ իրենց տանը մօտերը սենեակներու կամ բակերու մէջ արգելափակուած անմեղ հայեր կը մեռնին անօթութենէ:

Կառավարութիւնը բողոքներու և բարդութեանց առաջքը առնելու համար սկսած էր փողոցը գտնուած խեղճ գաղթականները խումբ-խումբ դրկել դէպի շրջակայքը և Միջագետք:

Այս սուկալի դրութեան ճար մը գտնելու յոյսով դիմեցի Եգիպտոսի և Մուրիոյ բանակի հրամանատար Ճէմալ փաշայի և հետևեալ պատասխանը ստացայ. «Վանի մէջ հայոց կատարած անգթութիւններու փոխարէն քիչ են այս եղածները. այսուամենայնիւ վստահ եղէք. Մուրիոյ մէջ հայու մէկ կաթիլ արիւն չի թափիր»:

Հալէպի հայ ժողովուրդը ընկճուած էր իրարու յաջորդող դէպքերու տպաւորութեան ներքև: Հալէպի մէջ հրացանագարկ եղան 7 սուետիացի հայեր իբր զինուորական փախստական, որոնցմէ մէկը՝ հակառակ բազմաթիւ գնդակներ ընդունելուն՝ չէր մեռած: Հալէպցի դաշնակցականներ բանտարկուած էին և չարաչար կաշառեցնէին զիրենք: Պաշտօնանկ եղած էին բոլոր հայ պաշտօնէաները. արգելուած էր հայերէն լեզուով թղթակցութիւն. արգելուած էր ոնէ հայու հասցէով դրամ կամ ուրիշ բան փոխադրել: Ճամբորդելը բացարձակապէս արգելուած էր. մեծ առուտուր ընել անհնար էր, իսկ կապալի գործերը կը մերժէին հայերուն: Թիւրք պաշտօնէաները, եթէ իրենց գործի ընթացքին հանդիպէին հայու մը, կը յետաձգէին անոր խնդիրը և կըսէին՝ «շուն, դո՛ւն սպասէ»:

Արևմտեան նահանգներու տեղահան եղած հայերը (Գոնիա, Կեսարիա, Իզմիտ և շրջակայք) ամբողջ էին, այսինքն այրերը կը գտնուէին իրենց ընտանիքներուն հետ և մասամբ կետրոնացած էին Հալէպի շուրջը: 1915 իսկ. ամսէն այդ քսորեալներուն ալ սկսան կամայական վերաբերմունք ցոյց տալ: Յաճախ կը պատահէր, որ ընտանիքի մը այր անդամները դուրսը կը գտնուէին ոնէ գործով և ահա յանկարծ կառավարութիւնը բոլիսներու միջոցաւ կը հաւաքէր, ով որ կը գտնար փողոցները, կուղարկէր կայարան, ուրկէ կը քշուէին դէպի Ռասուլէյն. այս յանկարծական տեղափոխութեանց միջոցին ի հարկէ նկատողութեան չէին առնէր, որ ընտանիքին մէկ մասը կը մնար Հալէպ, և այսպէս բաժանուելով, անզօր և անօգնա-



կան կը մնային: Մինչև այդ թուականը արևմտեան նահանգներու հայերը անադարտ մնացած էին, բայց երբ մաս-մաս դրկուեցան Ռասուլէյն, ուր կեանքի և պատուի ոչ մէկ ապահովութիւն կար, անոնք ալ ենթարկուեցան հայաստանցիներու վիճակին:

Գնացքը կեցաւ Ճարապլուսի կայարանը, և տեսանք, որ վակոնի մը մէկ բաժանմունքը խիստ հսկողութեան ներքն էր: Պատուհաններուն ետեւէն տեսանք սն հագուստով մարդիկ, դժգոյն դէմքեր, բայց անհնար էր իրենց մօտենալ և իրենք ալ կրճգուշանային ոնէ նշան մը ընելու և ոստիկանութեան ուշադրութիւնը հրաւիրելու: Հասկցանք, որ այս անձերը Պոլսէն արքայութեան յայտնի հայ մտաւորականներն են՝, որոնք կերթային Տիգրանակերտ դատուելու: Դատավարութիւնը տեղի ունեցաւ ի թէ ոչ, ի նչ հետևանք ունեցաւ չի կրցանք ստուգել: Միայն լսեցինք այսքանը տիգրանակերտցի թիրքերէ. «Հայոց բարձր մտաւորականները եկան Տիգրանակերտ, դատապարտուեցան և պիտի կախուին»:

Արաբ-Փունարէն անդին զանոնք փոխադրեր էին կառքով, և թիւրք կառապանը վերադարձին՝ գովելով կը խօսէր անոնց արժանաւոր և ազնուական վերաբերմունքի մասին և կը ցաւէր իրենց վրայ:

Վարդգէս և Չոհրապ(՞) իրենց հիւանդութեան պատճառաւ մնացին Հալէպ Ռոտիլ Ֆարաճ պանդոկը, ուր տասն և մէկ օր կենալէ ետքը՝ գնացքով մեկնեցան դէպի Եդեսիա (Ուրֆա): Հալէպէն նամակ մը գրած են Ճեմալ փաշային, որուն բովանդակութիւնը չեմ գիտեր, և հետևեալ պատասխանը ստացած են. «Պատրաստ եմ ձեզ դրամական օգնութիւն ընել, որքան որ կուզէք»:

Եդեսիոյ թիւրք պատգամաւորը, որ շատ ազնիւ և հայասէր մարդ մըն էր, դիմաւորած էր երկու հայ պատգամաւորները, հյուրասիրած էր իր տան մէջ և շատ աշխատած էր պահել զանոնք իր մօտ, ամեն պատասխանատուութիւն իր վրայ առնելով: Բայց կառավարութիւնը, մանաւանդ չեչեն ռէիսի Խալիլ պէյ, որ Պոլսէն եկած էր, հետը բերելով առնաուտ դատարկապորտներ հայերու կոտորածը կազմակերպելու մասնաւոր պաշտօնով՝ Տիգրանակերտի, Մարտինի և Խարբերդի շրջանին մէջ, արգելք հանդիսացան, և երկրորդ օրն իսկ Վարդգէս և Չոհրապ կառքով ճամբայ հանուեցան դէպի Տիգրանակերտ: Բայց Եդեսիայէն մէկ ժամով հագիւ հեռացած էին, երբ Ղարաքեօփրիւի քով Խալիլ պէյի հրամանաւ, որ ներկայ էր, կառքը կը կեցնեն և կը պահանջեն, որ երկու հայ պատգամաւորները իջնեն: Չոհրապ կ'իջնէ, բայց Վարդգէս ամեն ինչ հասկնալով՝ կը դառնայ Խալիլ պէյին և կըսէ. «Գիտեմ, որ մեզ սպաննելու համար եկեր ես. ես հիւանդ եմ, զիս կառքիս մէջ սպաննէ»:

Արդէն Խալիլ պէյը ատրճանակը ուղղած էր Չոհրապին, երկրորդ հարուածով զարկաւ Վարդգէս: Վարդգէսի արիւնը ներկած էր կառքը: Վերադարձին կառապ-

անը պատմեց այս մանրամասնությունները և ցոյց տալով արեան արատները, անիկա կըսէր. «Ասի ձեր պատգամաւորին արիւնն է, որ Խալիլ պէյ իր ձեռքովը սպաննեց»:

Կառապանին խօսքերը կը հաստատէր եղեսիացի հայ վաճառականի մը կինը, որ անձամբ լսէր էր կառապանէն: Նոյնը կը կրկնէին նոյն մանրամասնություններով եղեսիացի շատ մը հայեր և թիւրքեր(:

—————

*Եղեսիոյ (Ուրֆա) դիմադրությունը. Տեղահանութեան առաջին քայլերը. Հայերը ըմբոստ են. Բանակցություններ. Թիւրք բանակ մը կը պաշարէ հայոց թաղը. 15 օր կռիւլ. Եղեսիա քարոքանդ. Նախկին վիճակը:*

Կառավարությունը ծրագրած էր Եղեսիոյ տեղահանությունը, բայց ընդհանուր դիմադրութեան չի հանդիպելու համար թիւրքերը սկսան զանազան խաբէրայութիւններու դիմել և ըստ իրենց ծրագրին՝ մաս մաս հեռացնել նախապէս քաղաքին կարող անձերը:

Առաջին անգամ ձերբակալեցին 40 երեւելիներ և առաջնորդը: Ասոնք տարուեցան տեղւոյն բանտը, որ ախոռ մըն էր և ուր ձիեր կը կապէին: Թիւրքերը կը պատմեն, թէ շատ չարչարած են զիրենք. երբ հայերը կուզեն կերակուր տանել առաջնորդին և միւս բանտարկեալներուն, կարգելուին: Երկրորդ օրն իսկ բանտարկեալները կը փոխադրուին ուրիշ տեղ և կանհետանան:

Երկրորդ անգամ պահանջեցին առևտրական դասէն 100 հայեր: Հակառակ որ հազարներով ոսկի կաշառք տրուած էր պաշտօնեաներուն և զինուորականներուն, որոնք պատուոյ խօսք տուած էին բանտարկեալները պահել քաղաքին մէջ, այդ հարիւր հոգին ալ դրկուեցան, յայտնի չէ ուր, և անհետացան: Երրորդ՝) անգամ դարձեալ 100 հոգի ձերբակալուած և աքտրուած էին:

Եղեսիացիները գիտէին հայաստանցի հայերու վիճակը, տեսէր էին անոնց ողորմելի կարաւանները, լսէր էին անոնց պատահած զարհուրելի դէպքերը, և տեսան, որ Եղեսիոյ տեղահանությունը սկսած էր կատարուիլ ճիշդ նման ուրիշ հայաբնակ վայրերու ժողովուրդներու տեղահանութեան: Գիտէին, որ եթէ - հնազանդէին, հետևանքը պիտի ըլլար աղջիկներու և մանուկներու առևանգությունները, այրերու կոտորած, կանանց բռնաբարութիւն, մահ և սոսկում և բոլոր այն քստմնելի անցքերը, որ տեղի ունեցած էին իրենց աչքերուն առաջը:

Եղեսիացի հայ կիները վառուեցան ցասումով և ըմբոստությունով և ստիպեցին իրենց այրերը, որ այլևս չի հնազանդին և չի յանձնուին կառավարութեան:

Այդ միջոցին նոյն քաղաքացի թիւքեր լուր դրկած էին հայ գեղեցկադէմ կիներու և ըսած էին. «Եթէ Եդեսիոյ հայերը տեղահան ըլլան, դուք անհոգ եղէք, դուք և ձեր զաւակները մեզ մօտ կը մնաք, դուք մերն էք»:

Չերքեզներ, թիւրքեր, տակաւին կռիւր չըսկսած, կու գային, հայոց դռները կը զարնէին, դրամ և աղջիկ կը պահանջէին, և մերժուելով, կըսպառնային կոտորել զիրենք տեղահանուած օրը: Այն տուները, որոնց այրերը արքայութեամբ էին կամ զինուորութեան գացած, կենթարկուէին տեղացի թիւքերի սասարդներու գիշերային յարձակումներուն, որոնք կը կողոպտէին, կը բռնանային և ամեն կարգի - չարիք կը գործէին:

Եդեսիոյ կիները ունէին արդէն լաւ կազմակերպութիւններ, որով կը պահէին որբանոց, արհեստանոց, կարմիր խաչի ընկերութիւն և այլն. այդ ընկերութիւններու բոլոր անդամուհիները համաձայնեցան և պատրաստուեցան թունաւորուիլ, քան թէ իյնալ թշնամիին ձեռքը, յուսահատական պարագային:

Կառավարութիւնը կը շարունակէր 100 առ 100 մարդ պահանջել, բայց ժողովուրդը այլևս կընդդիմանար և ոչ ոք կը յանձնուէր: Կիներու թելադրութեամբ այրերը քաշուած էին շուկայէն, փակուած կը մնային իրենց բարձր թաղին մէջ, և միայն կիները առևտուրը կը շարունակէին: Բուռն միջոցներու առաջքը առնելու համար հարիւր հազարներով կաշառած էին կառավարութիւնը, բայց անիկա խիստ կերպով կը պահանջէր այրերը և մանաւանդ Եդիզարդաշեաններու՝) մեծ եղբայրը: Անիկա կաղ էր և խիստ հետապնդման ենթակայ, բայց և այնպէս ամեն օր զանազան ծպտումներով կիջնէր քաղաք և նոյն իսկ կառավարական շէնքերու մէջ մտնելով, կիմանար հայոց մասին եկած հրամանները և տրուած տեղեկութիւնները:

Կառավարութիւնը հեռացուցած էր հայաստանցի հայերը, որոնք կը գտնուէին Եդեսիա, և միւս կողմանէ խիստ կերպով արգելած էր տեղացի հայերու ունէ պատճառաւ քաղաքէն մեկնիլ:

Հեռացուցած էին նաև Եդեսիայէն Սուրիոյ երոպացիները, որոնք իբր պատերազմական գերի կը մնային այդտեղ, և անոնց բնակութեան համար մօտակայ վայր մը յատկացուցած էին:

Այս բոլոր անցուդարձերը մտահոգ կը դարձնէին հայերը, որոնք զիտէին, թէ ի՞նչ կը պատրաստուէր իրենց համար: Քաշուած էին իրենց բարձր թաղի տուներուն մէջ և թոյլ չէին տար ունէ օտարական իրենց թաղը մտնայ, որովհետև թիւքք, քիւրդ վերջին ատենները արտօնեալ էին մտնելու իրենց փափագած հայու տունը և ընելու ինչ որ իրենց դիւային երևակայութիւնը թելադրէր իրենց:

Այդ օրերուն խուսք մը ոստիկաններ եկան հայ տուն մը խուզարկելու. տանը մէջ այր չի կար և մնացեր էին մայր ու աղջիկ. այս վերջնոյն գեղեցկութիւնը հրապուրեց ոստիկաններու պետը, որ ապարդիւն խուզարկութենէն ետքը ուզելով իր կիրքը -

յազեցնել, ուստի կաննեքուն հրամայած էր բռնի տանել աղջիկը տանը մէկ սենեակը, ուր թագստոցի մը մէջ պահուած կը մնար աղջիկան եղբայրը: Երբ ուստիկանապետը կը մօտենայ հայ աղջիկան, եղբայրը չի հանդուրժելով քրոջը - սպառնացող վտանգին, դուրս կելլէ թագստոցէն և ատրճանակը արձակելով, կըսպաննէ ուստիկանապետը: Խուճապ տանը մէջ, ճիչ, աղաղակ, որու միջոցին ուստիկանները կը փախին և սարսափած լուր կը տարածեն թիւրք ժողովուրդին մէջ, թէ հայերը ապստամբած են:

Կառավարութիւնը անմիջապէս օգուտ կը քաղէ այս դէպքէն և ահազանգը կը հնչէ թիւրքութեան մէջ: Տեղւոյն զինուորական իշխանութիւնը կը հեռագրէ Հալէպ. «Շուտով օգնութեան հասէք, Եդեսիա վտանգի մէջ է. հայերը ապստամբած են»: Եւ այս պատճառաւ Հալէպէն Ֆախրի փաշան կը դրկեն, որ շուտով քննութիւն բանայ և հարկ եղածը կարգադրէ:

Ֆախրի փաշան բնութեամբ այնքան գէշ մարդ չէր. ստիպուած էր գործադրել իրեն տրուած հրահանգները, բայց կը նախընտրէր մեղմութեամբ կարգադրել ամեն ինչ և չէր զլանար ձեռքէն եկած դիրտութիւնները ընծայելու ժողովուրդին: Զէյթունի մէջ փոխանակ 300 հոգին կախելու, դրկեց անոնց Դամասկոս: Երբ Հաճընի ժողովուրդը երեք օր չանսաց կառավարութեան հրամանին, փոխանակ բռնութեան դիմելու՝ ջանաց համոզել, որ խաղաղ կերպով տեղահան ըլլան: Նիզիպի խանի վիճակին տեղեկանալով, բարուքեց անոնց վիճակը:

Այս անգամ Եդեսիա հասնելով, քննութիւն բացաւ և անմիջապէս հաստատեց, որ Հալէպ դրկուած տեղեկութիւնները ճիշդ չէին և թէ հայերը ապստամբական վիճակի մէջ չէին: Բայց որովհետև Եդեսիոյ հայերու տեղահանութիւնը վճռուած էր և գործադրութիւնը յանձնուած էր իրեն, անիկա բանակցութեան մտաւ հայերու հետ և համոզեց, որ հնազանդին և խոստացաւ ամեն դիրտութիւն և ապահովութիւն ընծայել իրենց:

Հայերը ընդունեցին իր առաջարկութիւնները, բայց միակ պայման մը դրին, այն էր՝ վերադարձնել այն 250 այրերը, որ նախապէս ձերբակալած և աքսորած էին. երբ իրենցմէ բաժնուած հարազատները ետ դառնան, այն ատեն կը յանձնուին և կառավարութեան նշանակած տեղը կերթան: Ֆախրի փաշան պիտի ուզէր կատարել եդեսիացիներու խնդիրքը, բայց անհնար էր, քանի որ աքսորեալները սպաննուած էին:

Երբ հայերը տեսան, որ Ֆախրի փաշան զանազան խորամանկութիւններով կը ձգձգէ իրենց խնդիրքը և կը խաբէ զիրենք, ըսելով թէ՝ այս ինչ տեղ պիտի կարենան միանալ աքսորեալներուն, եդեսիացիները չուզեցին զոհ երթալ այդ սովորական խաբեքայութեանց և բացարձակապէս յայտարարեցին, որ իրենց տուներէն դուրս չի պիտի ելլեն:

1915 թ. հոկտեմբեր ամսուան մէջ Ֆախրի փաշային տուած տեղեկութիւններուն հիման վրայ և ինչպէս կենթադրուի՝ Ճեմալ փաշայի հրամանով Հալէպէն դրկեցին կանոնաւոր զինուորներ, 3 թնդանօթ, 4-5 միթրայլեօզ, սպաներ և ամբողջ բանակի մը հարկ եղածը ու քալեցին Եդեսիոյ վրայ: Տեղական իշխանութիւնը արդէն հաւաքած էր շրջակայ քիւրդերը, զինած էր ասոնք և տեղացի թիւրքերը և կանչած էր նոյն իսկ Պունպուճի չերքեզները: Իսկ Պերէճիքի և այդ կողմերու թիւրքերն ալ կամաւոր կերպով կերթային Եդեսիոյ հայերը կողոպտելու և կոտորելու: Այնպէս որ տասնեակ հազարաւոր հոգիներու բազմութեամբ պաշարած էին հայոց բարձր թաղը:

Հայերը տուած էին զինուորներ թիւրքական բանակին, այնպէս որ իրենց եր-  
խտասարդ և կռուող ոյժը կը պակսէր: Կառավարութիւնը նոր արքայութիւնը էր հարու-  
ստները և երխտասարդները և մեծ թիւով տղամարդ հեռացուցած էր, իբր արհես-  
տաւոր են. բայց կիները ու աղջիկները արիւրթեամբ զինուած՝ եկան միացան այն  
սակաւաթիւ տղամարդոց, որ դիմադրութեան կորիզը կը կազմէին, և ուխտեցին  
մեռնել կռուելով, քան թէ անարգ թշնամիին ձեռքը անցնիլ ու անոր նախաս-  
իւնքներուն ենթարկուիլ:

Կռիւր սկսաւ. յարձակումները տեղի կունենային չորս կողմէն. ամեն օր առաւ-  
օտէն մինչև կէսօր հրացաններու ծուխը կը ծածանէր հայոց թաղին վրայ. հայերու  
համար անտարակուսելի էր, թէ փրկութեան ունէ յոյս չի կայ, բայց իրենց տրամ-  
ադրութիւնները բարձր էին ու երգելով և զուարճութեամբ կը դիմադրէին թշնամիի-  
ն հրացանաձգութեան և քաջութեամբ պատասխանելով, բազմաթիւ թիւրքերու  
դիակներ կը ձգէին գետին: Եդեսիոյ այն թիւրքերը, որ առաջին կրակը բացած էին,  
բոլորն ալ ինկան գրեթէ, այնպէս որ մեծ խուճապ յառաջ եկաւ իրենց մէջ, իրար-  
անցում և սարսափ, նամանաւանդ, որ կանոնաւոր զօրքը չէր յաջողած գրաւել  
հայոց թաղը, մինչդէռ հայ աղջիկներ, չես գիտեր՝ ո՞ր տեղէն դուրս գալով, ձեռքի -  
ռումբեր կը նետէին թիւրք խուժանին մէջ և կանհետանային:

Քաղաքին թիւրքեր հետզհետէ փախան և պահ մը հայերը տէր դարձան ամբողջ  
Եդեսիոյ: Քաղաքը շրջապատող թիւրք և քիւրդ խուժանին մէջ թուլութիւն յառաջ  
եկաւ. շատերը կը հեռանային և իրենց տեղերը վերադառնալով, չափազանցեալ և  
առասպելական բաներ կը պատմէին հայերու ոյժի մասին: Կանոնաւոր զինուորը  
ստիպուած՝ աւելի խիստ պաշարման ձեռնարկեց և մեծ թափով կրկին յարձակում  
տեղի ունեցաւ: Իրենց մէջ կային արաբ զինուորներ, որոնց հայերը կոչ կրնէին և  
կրսէին. «Դուք եղբայր էք, ինչո՞ւ կը կռուէք մեզ հետ, մենք ձեզ չենք զարներ, դուք  
հեռացէք»:

Կռիւր տևեց 15 օր. այդ միջոցին Եդեսիոյ համբաւը՝ հայ քաջերու անունը,  
մանաւանդ Եդիզարդաշեաններու համբաւը տարածուեցաւ շրջակայ վայրերու  
մէջ. կառավարութիւնը շփոթուած այս անսպասելի դիմադրութենէն՝ հրամայեց

վճռական միջոցներու դիմել: Տախրի փաշան կուզէր առանց քաղաքը քանդելու հայերը պահել պաշարուած դրութեան մէջ, որով անօթութենէ ստիպեալ՝ ժամանակի ընթացքին հայերը անձնատուր պիտի ըլլային: Բայց Հալէպի զինուորական խորհուրդը հրամայեց շուտով վերջ տալ այդ դիմադրութեան, թնդանօթները - գործածելով: Հոկտ. 16-20-ին թնդանօթները որոտացին և հայոց թաղը ու եկեղեցին քարուքանդ ըրին: Քանդեցին նոյն իսկ այն շէնքերը, որոնք հայոց թաղէն հեռու էին և կռուի շրջանակէն դուրս կը մնային: Բայց այս աւերումն իսկ չընկճեց հայերը, որոնք յուսահատօրէն շարունակեցին դիմադրել: Թշնամի բանակը շփոթութեան մատնուած էր, որովհետև չէր կարողացած առաջուց իմանալ, թէ հայերը ապաստան պատրաստած էին գետնափորներու մէջ: Այս գետնափորները հին ժամանակներէ ի վեր գոյութիւն ունէին և հայերը՝ գուշակելով իրենց զլխուն գալիքը, մասամբ նորոգեր, յարմարցուցեր էին իրենց պահանջներուն, և մանաւանդ պաշար ամբարել էին այնտեղ: Ունէին իրենց ընդարձակ ամբարները, ջրհորները, ապաստարանները բնակչութեան համար և նոյն իսկ այդ գետնափորներու միջոցաւ հաղորդակցութեան ճամբաներ ապահովեր էին պաշարման գիծէն դուրս: Երբ թշնամին հասկցաւ այդ գետնափորներու կատարած դերը, թնդանօթները ուղղեց դէպի գետին, խորտակեց ճամբաները և բարձրացող փոշիի ամպերուն մէջէն տեսնելով հայերու կողմէ արձակուած գնդակները, վերջին յարձակումով մը խորտակեց դիմադրութիւնը: Թիւրք զինուորները խուժեցին հայոց թաղը և սկսան անխնայ կոտորել անտուն ժողովուրդը: Երիտասարդները և աղջիկները տակաւին կը կռուէին. ցրուած խումբեր, առանձին մարդիկ կամ կիներ կռուեցան մինչև իրենց վերջին շունչը. շատ կիներ թունաւորուած էին և կը գալարուէին զինուորներու ոտքերուն տակ. մանուկներ, ծերեր շուարած կը դեգերէին աւերակներու մէջ, մինչ անդին խումբ մը աղջիկներ և տղաքներ կը հրդեհէին հայոց ինչքերը. կը դիզէին գորգեր, կարասիներ, նոյն իսկ ուտեստեղէններ և կը ջնջէին ամեն ինչ թշնամիին ձեռքը բան չի ձգելու համար:

Թիւրքերը գրաւեցին վերջապէս հայոց թաղը և սկսան հաւաքել մանուկները, ծերերը և երկու սեռէ կռուող հայերէն մաս մը, զոր յաջողած էին ողջ բռնել: Թիւրք զինուորականներ և զինուորներ զարմանալով կը դիտէին քանդուած գետնափորներու կառուցուածքը և կռուի մէջ ինկած հայ աղջիկներու դիակները, որոնց կուրծքերը զարդարուած էին փամփուշտակալներու շարքերով, և գրեթէ յուզուած կըսէին իրարու.

– Միթէ այսպէս բան կրնա՞ ըլլալ:

Կառավարութիւնը ձերբակալած էր մօտ 2000 հոգի, որոնց մէջ կային 200 չափ այրեր: Ասոնցմէ 60 հոգի իբր ապստամբութեան հեղինակներ կախուեցան Եդեսիոյ մէջ և մնացեալ 140 հոգին դրկուեցան Հալէպ դատուելու համար, իսկ կիները՝ ու երեխաները արքորուեցան Միջագետք:

Այն թիրքերը և քիրդերը, որ շրջակայքէն եկած էին կողոպուտի, ոչ միայն ձեռնունայն վերադարձան, այլ և սարսափած էին, որովհետև գետնափորներու մէջէն տակաւին կը յայտնուէին ողջ մնացած հայեր, որոնցմէ ոմանք մինչև մահ գնդակ կարձակէին:

Եդեսիա 1895-ի ժամանակ խիստ կոտորածի մը ենթարկուած էր, բայց հայերը քիչ աստենի մէջ իրենց կորուստները դարմանած էին և նախկին դիրքին տիրացած: Արաբներու հետ լաւ յարաբերութեանց մէջ ըլլալով, տէր դարձած էին գիւղերու և շրջակայքի մշակութեան գրեթէ ամբողջ արդիւնքը իրենց սեփականութիւնն էր: Քաղաքին մէջ վերստին ծաղկած էին վաճառականութիւնը և արհեստները, որոնք ամբողջովին հայերու ձեռքն էին:

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետքը ընդարձակուեցան գորգի - գործարանները և զարկ ստացաւ այդ արտադրութեան վաճառականութիւնը Ամերիկայի հետ: Բարգաւաճեցաւ կանանց ձեռագործի ընկերութիւնը, որուն արդիւնքը կարտածուէր մեծ մասամբ Ամերիկա: Հայերը ուղեցին քիրդ և թիրք հողատէրերու հետ երկրագործութիւնը դնել արդի պահանջումներու համեմատ վիճակի մէջ և ձեռնարկեցին մեքենաներ բերել տալ և հաստատել ջրարաշխութիւն: Բացուեցաւ ժողովուրդի պահանջով Պանք Օթոմանի մասնաճիւղ, երկրագործական պանք և այլն:

Հայերու ոչ միայն տնտեսական, այլ և մտաւորական կեանքը մեծ զարգացում ստացաւ: Ունէին իրենց թատրոնները, լսարանները, կանանց և այրերու առանձին գրադարաններ և երիտասարդական միութիւններ ժողովուրդը լուսաւորելու համար:

Գերմանական երկաթուղիի գիծը հասած էր Եդեսիայէն մինչև 4 ժամ հեռու, և այդ հանգամանքը մեծ առիթ էր վաճառականութեան զարգացման, որով և երկիրը կը հարստանար հետզհետէ: Գերմանացիները նախապատուութիւն կու տային հայերու և գիտնալով անոնց ժրաջանութիւնը և խղճամտութիւնը, իրենց կապալի - գործերը, առևտուրի վերաբերեալ միջնորդութիւնները և արհեստի գործերը կը յանձնէին հայերուն, որոնք գրաւած էին արդէն իսկ հողային և վաճառականական լաւագոյն դիրքերը: Անոնք սկսան նորէն գնել ընդարձակ արտեր, այգիներ, պարտէզներ և շինել եւրոպական ձևով քարաշէն ճերմակ տուններ, որոնց մէջ կը վարէին փարթաւ կեանք:

Այս ամենը ոչ միայն գրգռած էին տեղացի թիրքերը, այլ և կառավարութիւնն ալ պղտորուած էր, և գիտնալով շատ լաւ, որ իսլամ տարրը, հակառակ իր մեծամասնութեան, չէ կարող մրցել հայերու դէմ, տնտեսական պոյքոթի և այլ հալածանքներու միջոցաւ, ինչպէս հայաբնակ ուրիշ վայրերու մէջ, այստեղ ալ սկսած էր տկարացնել կառավարական միջոցներով հայերու տնտեսական և մտաւորական ոյժը:

Այս լարուած և թշնամական դրութիւնը գոյութիւն ունէր արդէն իսկ, երբ պատերազմը ծագեցաւ:

Քիւրդերու հարսանիք մը. Առժամեայ օրէնք արտրեալ հայերու  
սեփականութեանց մասին. Պէրէճիքի հայերը կիսլամանան եւ սակայն  
տեղահան կրլլան. Մարաշցի  
թիւրք զինուորի մը խօսքերը:

Պէրէճիքի և շրջակայքի բնակչութեան հոծ մեծամասնութիւնը կազմուած է քիւրդերէ կամ քրդական ու արաբական՝ ծագում ունեցող թիւրքերէ: Այս իսլամներու մէջ շէյխերը եռանդուն բրոբականտ կրնէին, որ ամուսնանան հայ աղջիկներու հետ և առնեն հայ մանուկներ, ըսելով որ թէ կրօնական տեսակէտով սէպապ է (աստուածահաճոյ) և թէ թիւրք սերունդի ազնուացման կը ծառայէ: Այս բրոբականտը շատ տարածուած էր, այնպէս որ ամեն կողմերէ յանձնարարութիւններով, նամակներով հայ աղջիկներ կուգէին, և շատերը անձամբ կուգային տանելու զանոնք:

Հեռաւոր վայրեր գտնուող թիւրք կամ քիւրդ գործաւորներ, պաշտօնեաներ, զինուորներ ու զինուորականներ, որ չէին կարող իրենց տեղերէն հեռանալ, կը խոստանային ամեն անոնց, որ աղջիկ մը, մանուկ մը կամ կին մը բերեն, վճարել 8 – 10 քէսէ (իւրաքանչիւր քէսէն 500 դրուշ է), կով մը, 10 ոչխար և այլն, իրենց կարողութեան համաձայն: Հայ աղջիկներու նկատմամբ տիրող այս ոգնորութեան պատճառաւ գրեթէ աղջիկ չէր մնացած, նոյն իսկ տգեղները տարուած էին: Շատ տեղեր հայ աղջիկ մը ձեռք ձգելը քաջութիւն մը, պարծանք մըն էր:

Հարուստ քիւրդ մը յաջողած էր իր տղուն համար գեղեցիկ հայ աղջիկ մը գտնել և իր այս յաղթանակին համար հրաւիրած էր շրջակայ բոլոր գիւղացիները, կազմած էր ձիաւոր մեծ թափօր մը, նստեցուցած էր հայ կոյսը ձիուն վրայ և ձին ու աղջիկը զարդարած էր թանկագին կերպասներով, էլմասներով, զարդերով: Աղջիկան առաջքէն խմբուած կը պարէին ու կերգէին գոյնգոյն հագուստներ հագած քիւրդ կիներ, փեսին մայրը և մօտ ազգականուհիները, իսկ տղան հագած էր ճոխ լաթեր ու ձի հեծած՝ սուր խաղացող երիտասարդներու հետ ձիարշաւ կրնէր: Տաւուլ գունայի առաջնորդութեամբ հրաւիրեալներու այս թափօրը գիւղերը պտտելով, կը պարծենար իր գտած հայ աղջիկան արժանիքներուն վրայ. երեք օր, երեք գիշեր տնեց այս հարսանիքին կերուխումը և զուարճութիւնները:



Այդ միջոցին թիրք թերթերը հրատարակեցին առժամեայ օրենք մը, գոր արտատպած էր նաև «Բիզանդիոն» օրաթերթը:

Օրենքը բաղկացած էր երեք յօդուածներէ, որուն գործադրութեանը համար Թալէթ պէյի հրամանաւ կազմուած էր թիրք յանձնախումբ մը:

Այդ օրենքը կը վերաբերէր տեղահան եղած հայերու անշարժ և շարժուն կայքերու գրաւման: Յանձնախումբը լիազօր էր հայերու կայքերը ծախել և պարտատէրներու դրամները վճարել. մնացեալը պիտի յանձնուէր տիրոջը, եթէ ներկայ էր, հակառակ պարագային պիտի մնար յանձնախումբին քով:

Այս օրենքի հիման վրայ սկսած էին արդէն գործի: Հապճեպով կը ծախէին հայերու տուները, պարտէզները, արտերը և այլն. իսկ պարտապահանջ հայերը ոչինչ չէին կարող գանձել:

Պէրէճիքի հայերը տագնապալի դրութեան մէջ էին. ոչ միայն կը տեսնէին ու կիմանային զանազան վայրերէ տեղահան եղած հայերու վիճակը, սոսկալի հետևանքները, այլ և կը նեղուէին տեղացի թիրքերէն, որոնք չափազանց մոլեռանդ էին և ամեն առիթով կը սպառնային տեղացի հայերուն: Կոպիտ բրովոքասիոններ տեղի կունենային գրեթէ ամեն օր: Օրինակ՝ թիրք մը ծրար մը կը տանի, հայու խանութ մը կը ձգէ, ըսելով թէ՝ կէս ժամէն կուգամ տանելու, և կերթայ ուղղակի կառավարութեան ինացնելու, թէ աս ինչ խանութը գէնք և փամփուշտ կայ. անմիջապէս ոստիկանները կու գան, կը խուզարկեն, կը գտնեն այն ծրարը, որ հարևան թիրքը ձգած էր, և գտնելով գէնք ու փամփուշտ, կը ձերբակալեն խանութպանը. երդում, աղերսանք անօգուտ էին:

Այս կարգի դէպքերը, շարունակական սպառնալիքները յուսահատական դրութեան մատնած էին Պէրէճիքի հայերը, որոնք կերպով մը իրենց գլուխը փրկելու համար որոշեցին կրօնակից ըլլալ թիրքերուն: 100 ընտանիք, ինչ որ Պէրէճիքի հայերուն ամբողջութիւնը կը կազմէ, ընդունեցին մահմեդականութիւնը և ամեն արտաքին ձևակերպութիւնները կատարեցին: Նոյն իսկ քանդած էին հայոց եկեղեցիին զանգակատունը և յուղարկաւորութիւնը հայ կնոջ մը, որ մեռաւ այդ միջոցին, իսլամական կրօնին համեմատ կատարեցին և թաղեցին թիրքաց գերեզմանատան մէջ: Միայն ծերուկ քահանան չէր ուրացեր իր հաւատքը և եկեղեցիին մէջ փակուած կը մնար՝ անդադար աղօթելով:

Թիրք ժողովուրդը և նոյն իսկ կառավարութիւնը մեծ յարգով ընդունեցին այս կրօնափոխութիւնը և դիմեցին Կ.Պոլսոյ Շէյխ իւլ Իսլամին, որպէսզի իր հրովարտակով վաւերացնէ նորափոխներուն իսլամութիւնը, ինչ որ կատարուեցաւ, և կառավարութիւնը սկսաւ բաժնել նոր ինքնութեան թղթեր մահմեդականացած հայերու: Յարաբերութիւնները լաւացան և թիրքերը սկսան իբր բարեկամ նկատել

խալամացած հայերը, երբ ահա հայոց թաղի բարձր դիրքը, Եդեսիոյ ապստամբութիւնը կասկածներ յառաջ բերին կառավարական շրջանակներու և մասնաւորապէս Ֆախրի փաշայի մտքին մէջ:

Նոյեմբերի 12-ին, հակառակ թիւրք ժողովուրդին և շէյխերու դիմումներուն, տեղահան ըրին Պերէճիքի ամբողջ հայերը և դրկեցին դէպի Միջագետք:

Մարաշի գիւղերէն թիւրք զինուոր մը, իր գիւղացի հայերուն տեղահանութիւնը լսելով, կառավարութեան դէմ կը զանգատէր և կըսէր.

«Մենք եղբօր պէս կապրէինք մեր հայ դրացիներուն հետ և անոնք մեր ամեն պիտոյքներուն գոհացում կու տային առանց զանգատելու: Երբ էս կըստիպուէի քաղաք երթալ գործով, առանց մերժելու կու տային իրենց ձին կամ էջը, որ օրերով երբեմն քովս կը մնար: Երբ գնումներ կընէի իրենց խանութներէն, դրամը անմիջապէս չէին առներ, ըսելով թէ՛ թո՛ղ մնայ, մի նեղուիր, և 5 – 6 ամիս ետքը կը վճարէի: Իմ զաւակներս անոնց տղոցը հետ կերթային խաղալու և կը սորվէին հեքիաթներ, երգեր: Մեր մանուկները այնքան կը սիրէին հայերը, որ անոնց տուներէն չէին բաժնուեր մինչև երեկոյ: Երբ էս զինուորութեան գացի, իմ տան ամբողջ ծախքը դրացիներս հոգացին: Երբ իմ ազգական Ալին եկաւ, պատմեց, թէ մեր տունը ոնէ բանէ չէր գրկուած շնորհիւ հայ դրացիներու հոգածութեան, այնպէս որ սիրտս շատ հանդարտ էր այդ մասին. բայց հիմա, երբ կը լսեմ մեր այդ բարի դրացիներուն տեղահանութիւնը, խելքս կը կորսնցնեմ և չեմ հասկնար, թէ այդպիսի լաւ մարդիկներու ինչո՞ւ այդպիսի չարիք կընեն: Հապա իմ մեծ ցաւս... իմ տանս վիճակը ի՞նչ պիտի ըլլայ»:

(Շարունակելի)

«Գործ» 1917, № 3, մարտ, էջ 40–64: